

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

ՍՊԱՍԵԼՈՎ ՊՈՌՊԿՈՒՄԻՆ

ՅԱՐՈՒԹՅԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

«Ի՞նչ կը խորհիս պիտի ըլլայ ասկէ վերջ»: Վերջին մի քանի շաբաթներուն այս հարցումն է որ յանախակիորէն կը բարձրացուի խօսակցութիւններու ընթացքին, ակնարկելով անշուշտ Հայաստանի վերջին իրադարձութիւններուն:

Մեկնելով այն նշմարտութեան, որ մեր ներկայի գործունէութեան կարելի է գուշակել գալիք ապագան, ուր մնալը հարցին պատասխանը կոհեղը այդքան ալ դժուար պէտք է ըլլայ:

Երբ ակնարկ մը կը մտնենք անցնող ամիսի 10 տարիներու զարգացումներուն վրայ, յստակ կը դառնայ ժողովուրդի մօտ հետզհետէ կուտակուող յուսախարութիւնը: Հոկտեմբեր 27, 1999-ի ահաւոր սպանդը ապշեցուց եւ ընկնեց ժողովուրդը, մեծ հարուած հասցնելով մեր պետականութեան: Իսկ աղէտի դատարաններու թիւն ու քաջայայտումն կոճկու մը վիրաւորեց ժողովուրդի արժանապատուութիւնը:

Ու ամէն մէկ սահմանադրական խախտման, խարդախութեան ընտրութեան, քրտախարութեան, խախտման, խախտման, խախտման արգելի հետ, ակնարկը խորտապահ ժողովուրդի արժանապատուութիւնը ու լայնցար անվստահութեան խրատաբար իր եւ իշխանութիւններուն միջեւ: Որքանով անեցաւ ժողովուրդի վնասակարութիւնը՝ տէր կանգնելու իր իրաւունքներուն, այնքանով կոշտացաւ իշխանութեան հակադարձութիւնը: Ժամանակին «ժողովրդավարութեան կողմ» մկատուող Հայաստանը տակաւ մահազնեց դէպի բռնապետութիւն: Հասարակարգ՝ որ իր բաղաճափներուն ստրկամտութիւն կը պարտադրէ, մինչ ժողովրդավարութիւն դաւանող որեւէ պետութեան համար բաղաճափական քարձք մակարդակի հասարակութիւն ու նեմալը մեծ հարստութիւն եւ ուժ է:

Առաջին մատչելի Լեւոն Տէր-Պետրոսեանի գործնական դաշտ վերադարձով ժողովուրդը գտաւ «գործիքը»՝ հրապարակաբար բարձրացնելու իր մէջ կուտակուած դժգոհութիւնը եւ սփոփելու իր վիրաւորուած արժանապատուութիւնը: Խարդախութեան դաշտին մատչելիութիւնը այդ կը փաստէ: Փաստ՝ որ չտեսնեմք 2003-ի խարդախութեան մատչելիութիւնը հեռու ստակայանի միջոցաւ ազատ խօսք լսելու եւ բնիքով անոր տէր կանգնելու ժողովուրդի վնաս-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՈՒՄՈՒԹԻՒՆԸ ՎՃՈՒԿԱՆ Է՝ ՎԵՐՍԿԱՍԵԼՈՒ ՀԱՆՐԱՅԱՒԱՔՆԵՐԸ ԵԽԽՎ-Ի ՊԱՅՄԱՆԱԺԱՄԻ ԱՄԱՐՏԵՆ ԵՏՔ

Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցները Մարտի 1-ի դէպքերէն յետոյ 50-է աւել ղիմում ներկայացուցած են Երեւանի քաղաքապետարան՝ հանրահաւաքներ կազմակերպելու համար, սակայն միշտ ալ ստացած են նոյն մերժումը: Մայիս 19-ին կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին այս մասին յայտարարեց առաջին նախագահի խօսնակ Արման Մուսիսեան:

«Մենք իշխանութիւններին ողջամիտ ժամկէտ տուցինք խելքի գալու եւ երկրում ընթացող գործընթացները բնական հուն մտցնելու համար: Եթէ իրենց մօտ բանականութիւնը չչաղթի, մենք չենք կարող յոյսներս դնել բանականութիւնից կաղող այս իշխանութեան վրայ եւ մենք պէտք է իրացնենք մեր սահմանադրական իրաւունքը», - ըսաւ Արման Մուսիսեանը: «Իշխանութիւններուն համար խելքի գալու ժամկէտը ԵԽԽՎ-ի՝ Հայաստանի վերաբերեալ Ապրիլ 17-ին ընդունած բանաձեւն է»:

Ներկայիս հայաստանի մէջ ստեղծուած ներքաղաքական իրավիճակը Տէր-Պետրոսեանի խօսնակի գնահատմամբ շատ լարուած, եւ պայթուցիկ է: «Այս իրավիճակը հետեւանք է Փետրուար 19-ի նախագահի ընտրութիւններուն կազմակերպուած գանգուածային կեղծիքներէ, ինչպէս նաեւ դրան



Լեւոն Տէր-Պետրոսեանի խօսնակ Արման Մուսիսեան

չաջորդած Մարտի 1-ին իշխանութիւնների կազմակերպած ջարդի»:

Մուսիսեանի կարծիքով, վերջին ամիսներու ընթացքին իշխանութիւնները ոչ միայն հետեւութիւնները չեն կատարած երկրէն ներս քաղաքական գործընթացները նորմալ հունի մէջ դնելու, այլեւ՝ կը շարունակեն բռնի մեթոտներով վերջնականապէս ճնշել ընդդիմութեան, բան մը որ չաջորդութեան չի կրնար հասնիլ: «Ապրիլի 17-ից՝ ԵԽԽՎ ընդունած

բանաձեւից յետոյ Հայաստանում 7 մարդ է ձերբակալուել: Այսինքն՝ քաղաքական հետապնդումները ոչ միայն չեն դադարեցուցուել, այլեւ՝ շարունակուել են եւ նոր թափ են ստացել քաղաքացիների նկատմամբ ուղղված ճնշումները», - ըսաւ ան: Խօսնակը աւելցուց, որ առաջին նախագահը որպէս երկիւստութեան հիմք կը շարունակէ ընդունիլ ԵՄ-ի եւ ԵԽԽՎ-ի առաջարկները, որոնք գործող իշխանութիւնները կ'ընդունին իբրեւ նախապայման:

Ըստ Մուսիսեանի՝ ԵԽԽՎ-ի եւ միջազգային այլ կառույցներու նկատմամբ գործող իշխանութիւններու վերաբերմունքի մասին կը վկայեն նաեւ այն փաստերը, որ մինչ օրս փոփոխութեան չէ ենթարկուած «Ժողովներ, հաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին օրէնքը» եւ չէ ձեւաւորուած անկախ յանձնաժողով՝ Մարտ 1-ի դէպքերը ուսումնասիրելու համար:

«Պետական մարմինները, որոնք զբաղուած են Մարտի 1-ի քրէական գործերը սարքելով, որեւէ ոչնչալ քայլ չեն կատարել Մարտի 1-ի իրական պատասխանատուների նկատմամբ: Կայ 10 գոհ, սակայն սպանութիւնների առիթով քրէական գործեր չեն յարուցուել, նոյն

Շարք էջ 4

ԹՈՒՐԵ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ԵՒ ԼՐԱԳՐՈՂԻ ԲԱՆԱՎԵՃ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

«Նոյնիսկ Աստուած չի կրնար փոխել անցեալը», - Մայիս 20-ին Երեւանի մէջ յայտարարեց Թուրքիոյ Լիբերալ-դեմոկրատական կուսակցութեան նախագահ Զէմ Տոկերը: Ան կը մասնակցէր Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններին նուիրուած միջազգային համաժողովին, որ կազմակերպուած էր Հայաստան-Եւրասիա հիմնադրամի եւ Գլոպալիզացիայի եւ տարածքային համագործակցութեան վերլուծական կենտրոն կողմէ:

Համաժողովի ընթացքին անսպասելիորէն հնչեցին անկեղծ մտքեր: Թուրք քաղաքական գործիչը, որու կուսակցութիւնը խորհրդարանէն ներս ընդգրկուած չէ, յայտարարեց, - «Ես շնորհակալ եմ այս փոքրիկ եւ հպարտ երկիրը գտնուելու հնարաւորութեան համար: Թուրքիան հպարտութեամբ կը յայտարարէ, որ իր բնակչութեան 99,9 տոկոսը մահմետական են: Թուրք պաշտօնեաներուն եւ կը հարցնեմ՝ իսկ ո՞ւր են միւսները, ո՞ւր են հայերը, հրեաները, յոյները, ինչո՞ւ անոնք հեռացած են: Այդ կը նշանակէ, որ բան մը սխալ է: Երբ կը քայն

ԱՏԵՍ ՇԻՖ ԲԱՆԱԶԵՒ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՄԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՓԱԿԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՊԱՅԱՆՁՈՂ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Դեմոկրատ անդամ Ատէմ Շիֆ, որ կը ներկայացնէ Կլինտոն-Փասատինա-Պրայքսի հայաշատ շրջանները, բանաձեւ մը ներկայացուցած է Գոնկրէսին, պահանջելով Միացեալ Նահանգներու նախագահէն ու պետական քարտուղարէն, որպէսզի ճնշում բանցնեն Թուրքիոյ վրայ, Հայաստանի դէմ Թուրքիոյ պարտադրած 15-ամեայ տնտեսական շրջափակումը վերցնելու համար:

«Հայաստանի դէմ թրջական շրջափակման վերացում» խորագիրը կրող բանաձեւը կը շեշտէ, թէ Թուրքիոյ այս արարքը չի նպաստեր աշխարհագրական այդ տարածաշրջանէն ներս ապահովութիւն եւ բարգաւաճում ապահովելու աշխատանքներուն եւ կը վնասէ Միացեալ Նահանգներու անմիջական ու երկարատեւ քաղաքական նպատակներուն»:

Բանաձեւին մէջ կը շեշտուի, թէ պետական քարտուղարութեան իսկ արժեւորումով, թրջական շրջափակումը պատճառ կը դառնայ, որ Հայաստանի փոխադրական ծախսերը 30-էն 35 տոկոսով աւելան, հարուած մը հասցնելով Հայաստանի առեւտուրին եւ տնտեսութեան:



Գոնկրէսական Ատէմ Շիֆ

Շրջափակման անմիջական վերացումը պահանջելու կողքին, բանաձեւը պետական քարտուղարութեան կը պահանջէ այս առնչութեամբ առնուելիք քայլերուն մասին տեղեկագիր մը ներկայացնել Գոնկրէսին, բանաձեւին վաւերացումէն ետք 30 օրերու ընթացքին:

«Պէտք է յաւելուել ճնշում պարտադրենք Թուրքիոյ վրայ, այս ահաւոր շրջափակման վերջ մը դնելու համար, որու շնորհիւ Հայաստան առիթ պիտի ունենայ լիիրաւ մասնակից դառնալու համաշխարհային տնտեսութեան ու պիտի արագացնէ եւրոպական կառույցներու հետ յարաբերութեանց սերտացման գործընթացը», յայտարարեց Ատէմ Շիֆ:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԻՆՔՆԱԲԻՄՈՒԵԼՈՒ ԻՐԱԴՈՒՆՔԸ՝ ՎԵՑ ԺԱՄՈՎ

Աժ-ում աւարտուեց «ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին» օրէնքում փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին օրինակները քննարկուած անալիզը ընթացումը: Այս օրինակները մշակուել է՝ հաշուի առնելով, իբր, ԵՄԽՎ-ում ընդունուած 1609 բանաձեւը, որտեղ կար կոչ «ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին» օրէնքն անյապաղ փոխելու վերաբերեալ: Ինչ արագութեամբ են մերոնք փոխում օրէնքը: Նախ որոշուել է այս օրինակները փոխել երկու ընթացումներով, երկրորդ ընթացումը նախատեսուած է յաջորդ քառօրեայում, երկու շաբաթուայ ընդմիջմամբ: Այս դէպքում, պարզ է, «անյապաղ» բառն օգտագործելը, մեղմ ասած, մոլորութիւն կը լինի: Մինչ այժմ «անյապաղ» մակդիրը սահմանափակ է միայն ընդդիմութեան հանրահաւաքները մերժելու մտադրութիւններին: Մարտի 1-ից յետոյ Երեւանի քաղաքապետարանը անյապաղ մերժել է հանրահաւաքներ անցկացնելու վերաբերեալ ընդդիմադիրներին 50-ից աւել իրազեկում: «Եթէ իրենց մօտ բանակապետութիւնը չլալթի, մենք չենք կարող յոյսներս դնել բանականութիւնից կաղող այս իշխանութեան վրայ եւ մենք պէտք է իրացնենք մեր սահմանադրական իրաւունքը», - զգուշացրեց Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսիսեանը:

դովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին» օրէնքում փոփոխութիւններ կատարելու նախագծով, Վենետիկի եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ փորձագէտների ջանքերով ու ճիգերով, վերականգնուել է ինքնաբերական հանրահաւաքներ անցկացնելու իրաւունքը: Բայց՝ որոշակի սահմանափակումներով: Ըստ ներկայումս քննարկման փուլում գտնուող օրինակների, «ինքնաբերական գտնուածային հրապարակային միջոցառումը չի կարող տեւել վեց

բուլի հանրահաւաքի իրաւունքը չպէտք է վերածուի գործիքի՝ շրջանցելու օրէնքը: «Ես չեմ կարծում, որ վեց ժամ յետոյ կարող է նորից արձագանքի առիթ լինել», - ինքնաբերական հանրահաւաքի հնարաւորութիւնն այս շրջագծով սահմանափակեց պետաիրաւական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Դաւիթ Յարութիւնեանը: Նա զուգահեռաբար բացատրեց, թէ ինքնաբերական հանրահաւաքի անհրաժեշտութիւնը կարող է ծագել՝

«օրէնքով սահմանուած միջոցներ»: Երեւի խօսքը էլեկտրաշնորհ, մահակների, չի բացառուած՝ հրազենի մասին է: Իսկ եթէ այդ ըմբոստների մէջ, այնուամենայնիւ, լինեն խիստ օրինապահներ, նրանք որոշեն ղեկմել քաղաքապետարան, որը, ըստ քննարկուող օրէնքի, կարող է ստանալ «հաւաստի տեղեկութիւններ» ոստիկանութիւնից եւ ԱԱԾ-ից, եւ մերժուեն, պիտի դիմեն դատարան: Այդ հնարաւորութիւնը առաջին անգամ եւ եւրոպացի փորձագէտների շնորհիւ տրուած է օրէնքի նախագծով: Ընդդիմադիր պատգամաւոր Ստիոպա Սաֆարեանը Աժ ամբիոնից բարձրաձայնեց քաղաքապետարան-ոստիկանութիւն դատարան շղթայի հետ կապուած իր մտահոգութիւնները: Նրա խօսքերով, Հայաստանի դատաիրաւական ներկայ զբաղման պայմաններում այս դրոյթն ընդամենը աւելորդ քաջշուկի առիթ է: Նրա գործընկեր Արմէն Մարտիրոսեանն էլ հռետորական հարց հնչեցրեց. «Կարող էք ինձ համոզել, որ այս 3 մարմիններում չկայ մարդու իրաւունքները ոտնահարելու սովորութիւն: Ոստիկանութիւնը կամայական որոշում կը կայացնի, քաղաքապետարանը դա կը հաստատի, դատարանն էլ գործը կը քննի փակ նիստում, կը մերժի»: Սա Հայաստանում թեւաւոր իրականութիւնից բխող համոզմունք է:

Աժ-ում քննարկուող «ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին» օրէնքում փոփոխութիւններ կատարելու նախագծով, Վենետիկի եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ փորձագէտների քննարկումով, վերականգնուել է ինքնաբերական հանրահաւաքներ անցկացնելու իրաւունքը. Բայց՝ որոշակի սահմանափակումներով

Ժամից աւելի: Նոյն ինչդիր առնչութեամբ անցկացուող ցանկացած յաջորդող գանգուածային միջոցառում է չի կարող ինքնաբերական համարուել եւ պէտք է անցկացուի իրազեկման սահմանուած ընթացակարգով»: Աժ պատգամաւոր Ստիոպա Սաֆարեանը գլխադասային յանձնաժողովի նախագահ Դաւիթ Յարութիւնեանից հետաքրքրուեց, թէ կարող է, ասենք, ինքնաբերական հանրահաւաքի մասնակցող մի խումբ հեռանալ հանրահաւաքի վայրից, յետոյ զալ մէկ այլ խումբ եւ յայտարարել՝ մենք էլ ենք ինքնաբերական հանրահաւաք անում: Դաւիթ Յարութիւնեանն ասաց՝ չէ: Նրա խօսքերով, ինքնա-

կապուած քաղաքական այս կամ այն իրավիճակի հետ: Եւ, ըստ Դաւիթ Յարութիւնեանի, Հայաստանում վեց ժամուկայ ընթացքում դժուար թէ փոխուի քաղաքական իրավիճակը:

ՀՀ մարդու իրաւունքների նախկին պաշտպան Լարիսա Ալաւերդեանը կատակի տուեց ինքնաբերական հանրահաւաքի հնարաւորութիւնները: Նա իր ելույթում մի քանի անգամ օգտագործեց «ինքնաբերական» անորոշ դերբայը: Իսկ ինչ կը լինի, եթէ ըմբոստներն ինքնաբերական ոչ թէ 6 ժամ, այլ 6,5, ոչ թէ 99 հոգով, այլ՝ 101: Տիրարան թորոսեանի խօսքերով՝ նրանց նկատմամբ կը կիրառուեն

Փաստօրէն, ստացուած է, որ անգամ այն դէպքում, երբ եւրոպացի դիրտորդները կրնակալին հետեւում են ժողովրդական չափանիշներին համապատասխանեցնելու կարիք ունեցող օրէնքի բարելամանը, մերոնք էլ ինչ-որ ձեւեր գտնուում են, շատերի համոզմամբ, կեղծ ընտրութիւնների միջոցով ձեռք բերած իշխանութիւնն անսասան պահելու համար:

ՄԻԱԿ ԶՄՊՈՂ ՈՒԺԸ ՐԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ Է

Մարտի 1-ի կարեւորագոյն հետեւանքն այն չէր, որ իշխանութիւնների եւ ժողովրդի միջեւ հակայական անդունդ առաջացաւ: Այդ անդունդը կար նաեւ մինչեւ Մարտի 1-ը: Այդ օրը ապացուցուեց, որ ռեժիմը յանցագործ է, բայց դա նոյնպէս որեւէ մէկի համար նորութիւն չէր: Աւելին. նոյնիսկ տասը գոհերի առկայութիւնը գլոբալ առումով ոչինչ չփոխեց ռեժիմի նկատմամբ հասարակութեան վերաբերմունքի մէջ, որովհետեւ Ռոբերթ Քոչարեանի տասնամեայ կառավարման ընթացքում ռեժիմն անհամեմատ աւելի շատ մարդկանց կեանքեր էր խլել: Պետութեան ապագայի տեսանկիւնից՝ Մարտի 1-ի հասցրած ամենամեծ վնասը բանակի ողնաշարը փշրելն էր: Վաղուց յայտնի է, որ սեփական ժողովրդի դէմ ուժ կիրառած բանակը երբեք եւ ոչ մի պարագայում չի կարող այդ նոյն ժողովրդին պաշտպանել արտաքին վտանգից: Սա պատմութեան ընթացքում բազմիցս ապացուցուած անհերքելի ճշմարտութիւն է:

Լաւ, ենթադրենք՝ ամէն ինչ հենց այդպէս էլ լինում է: Ռեժիմը երկխօսութեան մէջ է մտնում Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ, վերջինս ընդունում է Սահմանադրական դատարանի վճիռը, բոլոր քաղաքացիներն ազատ են արձակուում, ձեւի համար մի երկու ընտրակեղծարարներ պատժուում են, Մարտի 1-ի մասնակցի մի քանի ոստիկաններ տոյժերի են ենթարկուում եւ այլն: Բա յետոյ՞:

Որպէսզի պատկերացնենք, թէ ինչ է ռեժիմը մտադիր անել «յետոյ», պէտք է ընդամենը ուսումնասիրել վերջին շաբաթների իրադարձութիւնները: Այն, ինչ տեղի ունեցաւ զագի թանկացումից յետոյ, ռեժիմի մտադրութիւնների լաւագոյն ինդիկատորն է: Ամէն ինչ շատ պարզուսակ էր: Ռեժիմին հաւատարմի բեղմնամեծներին մի պահ թուաց, թէ արդեն «յաղթել պիտի են», ու որոշեցին, որ «դավալ, սկսելու վախտն ա»: Ու միանգամից բարձրացրեցին զագի գները: Սերժ Սարգսեանի պատասխանը նոյնպէս շատ յստակ էր. «սոո՛ւպ, վախտը չի, հըլը չենք կրել»: Իհարկէ, սննդամթերքի գները կամացկամաց բարձրանում են, բայց սա միայն սկիզբն է: Յանցագործների շրջանում էլ է երբեմն նոյն բանը տեղի ունենում: Ասենք՝ մի քանի հոգով խանութ են թաւանում, լցնում պարիզ ու փախչում, բայց դեռ ապահով տեղ չհասած՝ ամենասահմանքերը չի դիմանում ու ձեռքը խոթում է պարկի մէջ: Այդ ժամանակ աւազակապետը, որպէս կանոն, խփում է նրա ձեռքին ու կրճատցնում ատամները: «դրս վախտը չի»: Անհամբերի դերում այսօր Սամուէլ Ալեքսանեանն է, ու ամենեւին պատահական չէ, որ Սերժ

Սարգսեանը թիրխապահների միջոցով խփել է նրա «ձեռքին»: Երբեմն աւելորդ շտապողականութիւնը կարող է կործանարար լինել:

Այս ամէնն ասում ենք՝ ընդամենը ցոյց տալու համար, թէ ինչ կը կատարուի Հայաստանում «ներքաղաքական իրավիճակի կայունացումից» յետոյ: Ռեժիմը վերջապէս թեթեւացած շունչ կը քաշի եւ ձեռնամուխ կը լինի նրան, յանուն ինչի զաւթել է իշխանութիւնը՝ կանգ չառնելով անգամ սպանութիւնների առջեւ: Այսինքն՝ համատարած թալանի «ստարտը» կտրուի: Առջեւում, հերթական ընտրութիւններ չկան, արտաքին սպառնալիքներն էլ սրանց չեն հետաքրքրում: Այլ կերպ ասած, «տոնուով» չունեն:

Եւ եթէ մինչեւ հիմա սա կանխուում է, կանխուում է համաժողովրդական շարժման շնորհիւ: Բոլոր նրանց շնորհիւ, ովքեր բողոքի ակցիաներ են կազմակերպում հանրապետութեան տարբեր մարզերում, ովքեր դատարանների դահլիճներում զօրակցում են իրենց մարտական ընկերներին, ովքեր զբօսնում են Հիւսիսային պողոտայում եւ այլն: Կարող էք մի պահ անգամ չկասկածել, որ օրը այդ շարժումը դադարի, նոյն օրը Հայաստանում ամէն ինչի գները կը կրկնապատկուեն, բողոքողներին էլ հատ-հատ կը մեկուսացնեն:

Այնպէս որ, համաժողովրդական շարժումն այսօր միայն իր գոյութեամբ ոչ միայն զսպում է ռեժիմի ախորժակը, այլեւ կանխում է սոցիալական պայթիւնը: Եւ այս գոյութիւնն աւարտուելու է միայն ժողովրդի յաղթանակով:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ
ԶՈՐՐՈՐԴ ԻԾԽԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ
ՊԼԵՏՈՆԱԹԵՐԹ՝

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄՄՈՆԻՍՏԻԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Դեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՆՉ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ԵՒՆ ԿԱՆԽՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԱՐՏԻ 1-ԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ինչ է, մինչև մարտի 1-ը ժողովուրդը որեւէ ուժ կիրառելու էր, որեւէ պատկան կառույցի վրայ չարձակուել էր, ԿԸՑ-ն հրապարակեց ընտրութիւնների իրաւորակութիւնները, սակայն ժողովուրդը որեւէ բռնութեան չզնայ: Իշխանութիւնները յայտարարում են, որ Մարտի 1-ին ուժ կիրառուեց՝ աւելի մեծ վտանգ կանխելու համար, սակայն այդ ուժի կիրառումը արդարացուած չէր: Մարտի 1-ը կեղծուած ընտրութիւնների հետեւանքն էր», - այսօր ի պատասխան Մարտի 1 ուժի կիրառման վերաբերեալ իշխանութիւնների բացատրութիւններին յայտարարեց ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը: Քանի որ Մարտի 1-ին ուժ կիրառուելու բացատրութիւնը փորձել էր տալ Ռոբերտ Քոչարեանը եւ նշել, որ աւելի ծանր հետեւանքներն են փորձել կանխել՝ Ստեփան Դեմիրճեանը հարց ուղղեց. «Իսկ ո՞ր ծանր հետեւանքներն էին կանխուած: Իշխանութիւնը խաղաղ ճանապարհով կորցնելո՞ւմ»: Պարոն Դեմիրճեանը վստահեցրեց, որ երբեք հնարաւոր էր լինի այդքան մարդ հաւաքել, եթէ մարդիկ վիրաւորուած չլինեին ընտրութիւնների անցկացումից եւ հրապարակուած արդիւնքներից:



Ստեփան Դեմիրճեան

դարձութիւններից յետոյ երկրում առաջացած ճգնաժամը յաղթահարուած չէ. «Մարտի 1-ի դէպքերի հետեւանքները վերացնելու համար, անհրաժեշտ է անկախ եւ օբիեկտիւ հետաքննութիւն անցկացնել: Դա է հասարակութեան պահանջը»: Նա գտնում է, որ պէտք է եւ հնարաւոր է պարզել, թէ ով է հրահանգ տուել կրակել, ով է ուժ կիրառել. «Մարդիկ սպանուել են կոնկրետ գործողութիւնների արդիւնքում եւ ամէն մի դէպք պէտք է դառնայ քննութեան առարկայ: Առայժմ մենք այս հարցում չենք տեսնում օբիեկտիւութիւն»:

ՀԺԿ նախագահը համամիտ է, որ երկխօսութեան համար հիմք կարող է ծառայել ԵՆԽԿՎ բանաձեւը, սակայն արձանագրում է, որ այս ուղղութեամբ որեւէ լուրջ քայլ ՀՀ իշխանութիւնները չեն անում: «Ճգնաժամը յաղթահարելու, երկխօսութիւն սկսելու համար կոնկրետ քայլեր են պէտք, խօսակցութիւններով երկխօսութիւն չի լինում»:

ՀԺԿ առաջնորդն այսօր անդրադարձաւ նաեւ իշխանութիւնների այն տեսակէտին, թէ հանրահաւաքի ընթացքում ընդդիմութիւնը բռնութեան կոչեր է արել եւ նշեց. «Միտինգը գիտական սեմինար չէ: Նախ իշխանութիւնները թող մտածեն, թէ ինչու հանրահաւաք տեղի ունեցաւ: Այդ միտինգներին կարող է եղել եւ արտայայտութիւններ, որ անձամբ ինձ էլ դուր չեն եկել, ինչ է դրանք որեւէ մէկին թոյլ են տալիս ընտրութիւնները կեղծելու՞ կամ սպաննելու՞»:

ՀԺԿ առաջնորդը ընդգծեց, որ մարտի 1-ի ողբերգական իրա-

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ ԶԱՐԶԱԳԱՆՔԵՑԻՆ

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը կողմնակի մէջ մտնող ուժերի ղեկավարներին հրաւիրել էր Մայիս 20-ի երեկոյեան քննարկում կազմակերպել երկրում տեղծուած իրավիճակի շուրջ, սակայն որեւէ մէկը չարձագանքեց նրա նախաձեռնութեանը:

Նախօրէին Րաֆֆի Յովհաննիսեանը նամակ էր հասցէագրել իշխող կողմից այնպիսի անդամ կուսակցութիւնների ղեկավարներ Սերժ Սարգսեանին, Գագիկ Ծառուկեանին, Արթուր Բաղդասարեանին եւ Արմէն Ռուստամեանին, ինչպէս նաեւ

նախագահութեան նախկին թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ առաջարկելով նրանց այսօր երեկոյեան հանդիպել Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների հայկական կենտրոնում, սակայն նշում էր ծամին հրաւիրուածներից որեւէ մէկը չժամանեց:

«Մեր առաջարկը մէկ օրուայ առաջարկ չէ, մենք պատրաստ ենք սպասել մինչև քաղաքական ուժերն ընկալն են, որ երկխօսութիւնը հրամայական է», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Վարդան Խաչատրեանը:

ԸՆԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՐ

Ազգային ժողովն Մայիս 20-ին առաջին ընթերցմամբ ընդունեց «Ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրէնքում փոփոխութիւնների ու լրացումների նախագիծը, որը հեղինակել է Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսեանը:

Նախազօմ կանուակ է այն դրույթը, որ գանգուաձային միջոցառումներ զտնելու դէպքում միաժամանակ կարող են արգելուել նման միջոցառումները: Վե-

րականապէս է արտակարգ դրութեան ժամանակ ԱԺ արտահերթ նիստով մայր օրէնքից հանուած «ինքնաբուխ հանրահաւաք» հասկացութիւնը, բայց այն 6 ժամից աւելի տեւել չի կարող, շարունակուելու դէպքում արդեն գործում է իրազեկման կարգը:

Նախազօմ երկրորդ եւ ամբողջովին ընթերցումը կը կազմակերպուի Յունիսի սկզբին՝ գարնանային նստաշրջանի վերջին քաւորեալում:

«ՉԵՂԱԾ ՕՐԵՆՔՈՎ ԲԱՆԱԿԸ ԿԻՐԱՈՒՅԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՍ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Առաջնային մանդատով օժտուած երկու մարմիններից մէկն աւելորդ է», - այսօր յայտարարեց ՀՀ ԳԽ պատգամաւոր, ենթակառուցումաբարձր համակարգող նախկին նախարար, այժմ ՄԴՀԿ անդամ Վահան Շիրխանեանը: Նա գտնում է, որ առաջնային մանդատ ունեցող այն խորհրդարանը, որ ունենք այսօր, կարող է եւ ընդհանրապէս չլինել, քանի որ ոչ մի հական դերակատարութիւն չունի:

Կառավարութիւնը, որը ներկայացնում է օրինագծեր, կարող է դրանք չբերել ԱԺ հաստատելու, քանի որ այսօրուայ խորհրդարանում օրինագծերը որակական փոփոխութիւնների չեն ենթարկուած, եւ դրանք միանգամից կարելի է ներկայացնել նախագահի վաւերացմամբ: Վահան Շիրխանեանի այսպիսի հիասթափութիւնը պայմանաւորուած է նաեւ մարտի 1-ի դէպքերին խորհրդարանի բացարձակ անտարբերութեամբ: Վահան Շիրխանեանը յայտարարեց, որ Ռոբերտ Քոչարեանը կոպտօրէն խախտել է ՀՀ Սահմանադրութիւնը, երբ արտակարգ դրութեան պայմաններում օգտագործել է զինուած ուժեր, ինչը Սահմանադրութեամբ վերապահուած է միայն ռազմական սպառնալիքի, պատերազմի յայտարարման եւ անյայտ զօրահաւաք անցկացնելու ուժիմներ ենթադրող ռազմական դրութեան պայմաններում:

Նա մէջբերեց Սահմանադրութեան 55 յօդուածի 16-րդ կէտը, նաեւ ընթերցեց 81-րդ յօդուածի համապատասխան կէտը, համաձայն որի խորհրդարանը կարող էր չեղեալ յայտարարել արտակարգ դրութեան մասին նախագահի որոշումը՝ այսպիսով նրան զերծ պահելով

հերթական անգամ Սահմանադրութիւնը խախտելու հնարաւորութիւնից:

«Արտակարգ դրութեան ռեժիմը սահմանուած է օրէնքով, որը ՀՀ-ն չունի, եւ չեղած օրէնքով բանակը կիրառուեց ժողովրդի դէմ, մարտական փամփուշտներ կիրառուեց հայ մարդու դէմ. սա չեղած, արտառոց բան էր, եւ այստեղ խորհրդարանը ոչ միայն մեղքի բաժին ունի, այլեւ յանցակից է», - նկատեց Վահան Շիրխանեանը:

Նա լիչեցրեց, որ 20 օր Երեւանի փողոցներում կանգնած էին զինուորներ՝ գնդացիներով, հրացաններով, կարելի էր տեսնել զրահամեքենաներ, տեխնիկա, որ ոստիկանութիւնը եւ ազգային անվտանգութեան վարչութիւնը չունի. «Դա մեր բանակի արսենալում գտնուող տեխնիկան էր»:

Վահան Շիրխանեանը նկատեց, որ Հայաստանի պատմութեան մէջ նման սարսափելի բան տեղի չէր ունեցել եւ դեռ այսօր որոշ մարդիկ ոչ թէ ամաչում են, այլ ժպտալով փորձում պատասխաններ գտնել եւ արդարանալ. «Հայաստանում սարսափելի բան է կատարուել եւ շատերն են պատասխան տալու»:

Հանրապետական Արմէն Աշոտեանը, պատասխանելով խորհրդարանին ուղղուած Վահան Շիրխանեանի մեղադրանքին, նկատեց, որ ընդդիմադիր ոչ մի պատգամաւոր կասկածի տակ չառաւ արտակարգ դրութիւն յայտարարելու մասին հրամանագիրը: Այնինչ սահմանադրութեամբ եւ ԱԺ կանոնակարգով, նրանք նոյն օրը կարող էին արտակարգ դրութիւնը չեղեալ յայտարարելու վերաբերեալ որոշման նախագիծ ներկայացնել խորհրդարանի դատին, ինչը չեղաւ:

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԸ ՊԱՅԱՆՋՈՒՄ Է ՊԱՏԺԵԼ ԳՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Երեւանի մամուլի ակումբն պահանջել է յայտնաբերել եւ պատժել այն անձանց, ովքեր արտակարգ դրութեան ժամանակ գրաքննութիւն էին նախաձեռնել լրատուամիջոցների նկատմամբ:

«Մենք պահանջում ենք Մարտի 1-ի դէպքերի ու դրան յաջորդած իրադարձութիւնների անկախ հետաքննութիւն, որը պէտք է իրականացուի ԵՆԽԿՎ-ի թիւ 1609 բանաձեւի համաձայն, ներառել նաեւ ուսումնասիրութիւն, թէ ովքեր, ում հրահանգով եւ ինչ իրաւական հիմքով էին անցկացնում նախնական գրաքննութիւն, եւ պատասխանատուները պատժի ենթարկուեն ՀՀ օրէնքներով», - ասուած է ակումբի այսօրուայ յայտարարութեան մէջ:

Փաստաթղթի հեղինակները պահանջել են նաեւ «ղաղարեցնել այլակարծութեան համար հետապնդումները լրատուամիջոցների նկատմամբ՝ ինչ պատրուակով էլ որ դա իրականացուի»:

Ակումբը խստօրէն քննադատել է Հանրային հեռուստատեսութեան ղեկավարներին:

«Անցած մէկ տարուայ ընթացքում առաւել ակնյայտ է արտայայտուել Հայաստանի հանրային հեռուստառնկերութեան՝ իր կարգավիճակին ու առաքելութեան»

նը չհամապատասխանող գործունէութիւնը: 2008 թուականի նախագահական ընտրութիւններից առաջ եւ դրանց ընթացքում այս հեռուստառնկերութեան լրատուական եւ քաղաքական ծրագրերը ներկայացնում էին միակողմանի տեղեկատուութիւն եւ չէին պահպանում «Հեռուստատեսութեան եւ ռադիոյի մասին» ՀՀ օրէնքի՝ քաղաքական բազմակարծութիւն ապահովելու պահանջը: Աւելին, իր գործունէութեամբ Հանրային հեռուստառնկերութիւնը ոչ միայն չէր նպաստում ազգային համաձայնութեանը, այլեւ, ընդհակառակը, փոխադարձ ատելութիւն էր բորբոքում: Նոյն ոճով էր այն աշխատում նաեւ յետընտրական շրջանում», - ասուած է յայտարարութեան մէջ:

«Օրէնսդրութեան, հանրային հեռարձակման չափանիշների, պրոֆեսիոնալ նորմերի խախտման ողջ պատասխանատուութիւնն ընկնում է Հանրային հեռուստառադիոընկերութեան խորհրդի վրայ: Մենք համարում ենք, որ խորհուրդում, օրէնսդրական համապատասխան փոփոխութիւնների արդիւնքում, պէտք է հաւասարապէս ներկայացնուած լինեն ինչպէս իշխող քաղաքական ուժերը, այնպէս էլ ընդդիմութեան առաջարկած մասնագէտները», - գտնում է Երեւանի մամուլի ակումբը:

ՐԱՅԱՍՏԱՆ

ՔՈՉԱՐԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՅԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝ ՆՈՅՆ ԽՌՊՈՏ ԹՄԲՈՒԿԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՄԱՀԱԿ ԹՈՒԹՅԱՆ

Վերջերս «Մետիամաքս» գործակալությունը տուժած իր «բացառիկ» հարցազրույցին մէջ, իր ցուցաբերած իսկապէս բացառիկ քննադատով, կամայական դատումներով, ժողովուրդին պատճառած խոր վէրքերուն հանդէպ բացարձակ անհաղորդութեամբ եւ անզգայութեամբ, նախկին նախագահը անգամ մը եւս դառն հիասթափութեան առջեւ դրաւ ամբողջ հայ ժողովուրդը: Այս օրերուն, երբ Հայաստանի եւ Սփիւռքի լայն խաւերը կենսական լուրջ հարցադրումներու եւ անոնց բարւոք լուծման կը սպասեն, Քոչարեանի դրսեւորած պետական մարդու անյարիր մտածելակերպը պարզապէս լուսարձակի տակ կը բերէ իր վնասակար նկարագրի ողջ էութեան ժխտական բնույթը - թեթեւակի, անլուրջ, եսակեդրոն եւ թունալից ոճը, ինչպէս նաեւ հակաժողովրդական ու նոյնիսկ ժողովրդատեաց մարդը որ ամբողջ տասնամեակ մը պատանդ պահեց ու դժբախտացուց երկրի քաղաքացիները:

Հետեւելով Քոչարեանի հարցազրույցին, այն տպաւորութիւնը կ'ունենանք թէ Հայաստանի մէջ գոյութիւն ունենալէ դադրած է ժողովուրդը իր բոլոր խնդիրներով, եւ թէ հրապարակին վրայ մնացած են ինք ու նախագահութեան ընդդիմադիր թեկնածուն միայն: Լեւոն Տէր-Պետրոսեանի մտ իր տարակարծութիւններուն, քննարկներուն ու հակասութիւններուն քննարկում, միակողմանի վերարծարծումով սահմանափակուած է այս ընտրովի հարցազրույցը: Հետեւաբար, ասուլիսին կարեւորագոյն մասը կը կազմեն չըսուածները՝ աւելի քան ըսուածները:

Հարցազրույցի գլխաւոր յատկանիշը, ուրեմն, հոն արծարծուած խնդիրները չեն բնաւ: Ներկայացուած հարցերը, գիտակցաբար կամ անգիտակցաբար, գործակալութեան հետ համաձայնաբար կամ ինքնակամօրէն, այնպիսի կամայականութեամբ ընտրուած են որ շրջանցեն նշանակալի բո՛ւն խնդիրները որոնք անյապաղ լուծուած կը սպասեն եւ որոնց լուծման համար նուազագոյններդրումը չունեցաւ երկրի ապահովութեան ու քաղաքացիներու բարօրութեան գերագոյն երաշխաւորը՝ Հանրապետութեան նախկին

նախագահը: Ամբողջ տասը տարի ան մէկ կողմէ կեղեքեց իր ժողովուրդը, միւս կողմէ զբաղեցաւ նախագահական ներքին եւ արտաքին թուրիզմով: Թեքած էր ժողովուրդի օրըստօրէ լեռնակուտակ բարդուող սուր կարիքներուն ու բարդացող խնդիրներուն վրայ - ինք որ երկրի միակ տղամարդն էր՝ ի՛ր բնորոշումով: Ինչպէս նախագահական տարիներուն, այնպէս ալ անկէ ետք, կիսաքաղաքացի Քոչարեանի միտքին ծայրէն իսկ չանցաւ սա պարզ հարցը թէ ի վերջոյ բանն ինչո՞ւմն է, թէ հանրապետութեան նախագահի մը գերագոյն պարտականութիւնն ի՞նչ է: Նուիրական պարտքը համարեց իր զուտ անձնական նպատակներուն - եւ, ի հարկէ, շահերուն - անխոնջ հետապնդումը:

Ինչ կը վերաբերի երկրի դիմադրաւած եւ լուծման կարօտ հրատապ հիմնահարցերուն ու քաղաքական մարտահրաւէրներուն, ան ի՛րն ըրաւ անշարժութեան, բարդ հարցերուն չմտնելով, առկայ գոյովիճակը պահպանելու «իմաստուն քաղաքականութիւնը» - գիտնալով հանդերձ թէ ժամանակը թշնամիի՛ օգտին կ'աշխատի, եւ թէ մահացու մեղք է անլոյծ խնդիրներու առջեւ չաւերժ աչք փակելը:

Մոռցաւ թէ ո՛վ եւ ինչո՞ւ համար ընտրեց զինք:

Եւ այսօր ալ, երբ արդէն աւարտած է երկար տարիներ իրեն տրուած ոսկի՛ առիթը, անկէ մնացած է իր գրպանն ու խիղճը (???) ծանրաբեռնող ոսկին միայն: Միանգամ ընդ միշտ անցած-գացած է այդ առիթը, եւ ան դեռ կ'աղմկէ իր զուտ անձնական մանր դժգոհութիւններուն մասին: Լեւոնը, տեսէք, տկարամիտ է, անպարկեշտ ու վախկոտ - իսկ տեսէք ես ինչ մկաններ ունիմ: Եւ ահա, տոնքի շրջանի շրջեր հագած, ան կը գոռգոռայ ժամանցուած ձայնարկութիւններով՝ մտացածին անգոյ այնպիսի հողմաղացներու դէմ ինչպիսիք են ընդդիմութեան կողմէ իշխանութեան բռնազաւթումը եւ անգէն ցուցարարներու կողմէ գինեալ ոստիկաններու սպանութիւնը:

Ես պիտի խուսափիմ Քոչարեանի կողմէ քաջըլուած այն խնդիրներու քննարկումէն որոնք հասցէագրուած են Տէր-Պետրոսեանին, քանի ատոնք իշխանութիւններու կողմէ բազմիցս շահարկուած ան-

շահ կրկնասացութիւններ են: Պիտի չանդրադառնամ բերնի ծամոն դարձած տափակութիւններուն որոնցմով վարժուած են «ծեծի ենթարկելու» Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ ամբողջ ժողովուրդ մը տարիներով ծեծի ենթարկելէ ետք: Հայաստանի առաջին նախագահը շատ լաւ գիտէ պաշտպանել ինքզինք:

Հարցազրույցին մէջ Քոչարեանի շրջանցած բաց հայրենի ժողովուրդին համար կենաց եւ մահու հարցերուն անհրաժեշտ պատասխաններն է որ կը պահանջեմ ես այստեղ:

Պարոն Քոչարեան, Տէր-Պետրոսեանի հետ ձեր անձնական հասարակ գզվտուկէն եւ անհամ ու անհիմն բամբասանքէն զատ, նախկին նախագահի մը փորձառութեան վալել ի՞նչ ունիք պատգամելու՝ ձեր ծննդավայրն ազատագրող այս հերոսական ժողովուրդին զոր հետեւողականօրէն խաբեցիք ու խաչեցիք տասը երկար տարիներ, այսինքն մեր նորակերտ անկախութեան կարճ տեւողութեան կէսէն աւելին:

Դուք, պարոն նախկին նախագահ, որ ձեր հակառակորդին բարոյականութեան եւ պարկեշտութեան յորդորներ կը շուրջէք, անկեղծօրէն իրաւունք չունիք այդ երկու առաքինութիւններու բառերը ձեր բերանն առնելու՝ մինչեւ որ պատասխան տաք սա հարցման: - Ի՞նչ է ձեր դերակատարութիւնը 27 Հոկտեմբեր 1999-ի ՀՀ Ազգային ժողովի ազգային սպանդին մէջ: Անձնապէս ձե՛րը, ինչդրեմ: Եւ՝ այդ ոճիւրը ինչպէ՞ս եւ ի՞նչ չափով առնչուած է շրջան ընող այն պնդումներուն հետ թէ ծրագրած էիք Մեղրիի շրջանը գիշիւ Ատրպէյճանին՝ փոխարէնը Հայաստանին կցելով Լեւոնային Ղարաբաղը - Հէյտար Ալիեւի կողմէ դարբնուած փոխանակման հանձարեղ ծրագիր որ մեր պորտալարը ամբողջութեամբ պիտի կտրէր դրացի իրանէն եւ պիտի նշէր մեր անկախութեան վերջալոյսը: Եթէ դուք անմեղ էք այս սպանդի եւ ծրագրի մէջ, ապա հաճեցէք բացատրել այն բազմաթիւ հանգամանքները որոնք ծանօթ են ամբողջ ժողովուրդին եւ որոնք, հասկնալիօրէն, կասկածանքի կիցակէտին տակ պահած են ձեր անձը՝ գրեթէ ութը տարիներէ ի վեր:

Ինչո՞ւ Մարտի 1-ին հրաման արձակեցիք որ ոստիկանները կրակեն խաղաղ հանրահաւաքի իջած անգէն ու անպաշտպան ժողովուրդին վրայ: Հաճիք վագ անցէք «ոստիկանութեան» եւ «ոստիկանութեան գորքերու» միջեւ հարցազրույցին մէջ ձեր առաջ քաշած «գէնք կրելու ռեժիմի տարբերութեան» մասին բիւզանդական կաղիլի եւ անլուրջ բանգիտութեան եւ անպարտութեան փորձերէն: Ականատեսի վկայութիւնները, բազմաթիւ տեսաժապավէտները եւ տասնաւելի սպանուածներու փաստը անառարկելիօրէն կ'ապացուցեն թէ հրագէնակիր ոստիկանները կրակեցին անգէն ժողովուրդին վրայ: Եւ այդ եղաւ ձե՛ր հրամանով անձնապէս: (Փոքր յիշեցում մը՝ ձեր թոյլտուութեամբ: - Հարցազրույցին մէջ դուք համետօրէն նշած էք «երկու սպանուածներ» միայն եւ նախագահական գարմանալի «փափկանկատութեամբ» մոռացութեան կու տաք միւսները):

Ոստիկաններու գինեալ ըլլալուն կամ չըլլալուն հետ կապուած այս կարեւոր հարցին առնչութեամբ մեզ համար դեռ անբացատրելի կը մնայ ձեր «համոզուած» ըլլալը թէ «Տէր-Պետրոսեանը գիտի այդ մասին, սակայն գիտակցաբար մոլորութեան մէջ է գցում իր կողմնակիցներին»: Ամենայն անկեղծութեամբ, պարոն նախկին նախագահ, համոզուած եմ թէ դո՛ւք էք որ, ի հարկէ գիտակցաբար, մոլորութեան մէջ կը փորձէք գցել ոչ միայն ձեր կողմնակիցները (որոնք իրականութեան մէջ շատ չնչին տոկոս կը կազմեն), այլ նաեւ համայն հայ ժողովուրդը, Եւրոմիութիւնը եւ ամբողջ աշխարհը:

Ակնարկելով Մարտի 1-ի ողբերգութեան, կ'ըսէք. «Չեմ անդրադառնայ իրադարձութիւնների ժամանակագրութեան մանրամասներին. հետաքննութիւնը պէտք է ըրայէ առ ըրայէ վերականգնի Մարտի 1-2ը Երեւանում տեղի ունեցածի պատկերը: Յոյս ունեմ, որ դրանով կը զբաղուի նաեւ յատուկ յանձնաժողովը, որն առաջարկում է ստեղծել Եւրոպայի Խորհուրդը: Յուսով եմ նաեւ, որ բոլոր նիւթերը կը հրապարակուեն, եւ ցանկացած քաղաքացի կը կարողանայ ինքնուրոյն տարանջատել ճշմար-

Շաբ.բ էջ 19

Advertisement for A.B.A. Insurance Services. Includes logo with '33th Anniversary' (1975-2008), contact info (818 500-9585), and a cartoon illustration of a man in a suit.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՆՉՊԵ՞Ս ԱՄԵՐԻԿԱՆ ՄԽՐՃՈՒԵՑԱԻ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆՆԵՐ

2008 թվականի Նոյեմբեր ամսուն, տեղի պիտի ունենան Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութիւնները: Այս մեծ հանրապետութեան կեանքէն ներս բոլոր ընտրութիւնները կարելոր են, ինչն աստիճանի ալ ըլլան անոնք: Սակայն այս տարի տեղի ունենալիք նախագահական ընտրութիւնը խիստ կարեւոր համագամանք ունի բազմաթիւ պատճառներով, որոնց ծանօթ է հասարակութիւնը: Այս պատճառներն ունին ներքին եւ արտաքին տուեալներ, որոնց մէջ, եթէ կարեւորագոյնները չիշեյու ըլլանք, պիտի թուենք քաղաքական, տնտեսական, ընկերային եւ ասոնցմէ բխած տարբեր-տարբեր ճիւղաւորումներ:

Այս յօդուածի սահմաններէն ներս յատկապէս նկատի պիտի առնենք Ամերիկայի իրաքեան արկածախնդրութիւնը, որ ներկայիս մտած է իր ճրդ տարուայ ընթացքին մէջ եւ յայտնի ալ չէ երբ պիտի վերջանայ: Ներկայիս ականատես կ'ըլլանք անվերջանալի ցանկի մը մահերու, քանդուածներու, կրօնական եւ ահաբեկչական գործունէութեանց, որոնց բոլորն ալ, գէթ առայժմ, շատ քիչ առիթ կու տան լաւատեսութեան, եւ հինգ տարիներ առաջ սկսուած իրաքեան պատերազմի հաւանական լուծման:

Յստակ է որ իրաքեան պատերազմը կեդրոնական նիւթերէն մէկը պիտի հանդիսանայ նախագահական ընտրութեան վերաբերեալ ընտրապայքարի վիճաբանութեանց: Ընտրութեան իջած երկու հակադիր կուսակցութիւնները, Տեմոքրատի եւ Հանրապետական տարբեր պատկերացումներ ունին իրաքի պատերազմի հետ կապուած խնդիրներուն, որոնցմէ գլխաւորը կը հանդիսանայ այս իրաքեան կացութեան վերջ մը տալու փնտռութիւնը: Հանրապետականներու հաւանական թեկնածու ձօն Մքքէյնի թեկնածութիւնը շատերուն համար կը նկարագրուի իբրեւ Պուշի իշխանութեան «Յրդ շրջանը», այսինքն շարունակութիւնը: Այս ուղղութեամբ ձօն Մքքէյն տակաւին չի յաջողիր ինքզինք լման «ազատագրել» Պուշի ազդեցութենէն եւ եթէ այսպէս շարունակէ, այլ պատճառներու կարգին, իրաքեան պատերազմը զինք եւ իր կուսակցութիւնը պիտի առաջ-

նորդէ վստահ ձախողութեան: Տեմոքրատիներու պարագային, գէթ իրենց ելուցներու ընթացքին, առաջնորդող երկու թեկնածուներն ալ, Օպամա եւ Քլինթըն կը խոստանան «օր առաջ» իրաքէն քաշուելու յայտագիր մը, թէեւ առանց յստակ ժամկետի յայտնելու: Այս վերջիններն ալ համաձայն են որ Ամերիկեան զօրքեր տակաւին չըջան մը, պիտի «պարտաւորուին» իրաք մնալու: Սակայն յստակ չէ թէ որքան եւ ինչ պայմաններու տակ:

Մինչ այս մտքերը յառաջ կը քշուին, անդին իրաքեան պատերազմը ամէնօրեայ նիւթ կը հայթայթէ ոչ միայն վերոյիշեալ մահերու, քանդուածներու եւ յուսահատական նախաձեռնութեանց, այլ նաեւ ֆիլմերու նիւթ կը դառնայ, որոնք տխուր պատկերներու տեղի կու տան, այլ նաեւ կը գրուին գրքեր, թէ ինչու եւ ինչպէ՞ս Ամերիկեան միաբնակեցաւ այս անել կացութեան մէջ, եւ ինչ տեսակ վնասներու ենթարկուեցաւ Ամերիկեան, այս պատերազմի ընթացքին:

Վերջերս երկու հրատարակուած գիրքեր իմ ուշադրութիւնս գրաւեցին եւ ասոնց մասին կ'ուզեմ հակիրճ անդրադարձ ունենալ:

Առաջին գիրքը իբրեւ խորագիր ունի «3 թրիլիոն տոլարի պատերազմը» «The Three Trillion dollar war», որուն հեղինակները երկուք են, Նոպլեան մրցանակ շահած պրոֆ. Ճօզֆ Սիկլիթզ, տնտեսագետ մը, եւ Հարվըրտ համալսարանէն՝ Լինտա Պոլմէս: Այս երկուքը առարկայօրէն կը նկարագրեն ոչ միայն պատերազմի պատճառած նիւթական վնասները, որոնք աստղաբաշխական գումարներու կը հասնին, (չենք ալ կրնար պատկերացնել թէ այս թրիլիոն ըսուածը ինչ գումար է), այլ այդ ծախսին հետ առնչուած մարդկային քանդումները:

Երկրորդ գրքի խորագիրը կը կրէ «Պարտութիւն», «Defeat» որուն հեղինակն է ձօնաթան Սթիւ անտոնով հեղինակ մը, որ ծանօթ է շրջանի պատմութեան եւ թղթակիրն է «Guardian» թերթի, եւ իր թէզը կը նկարագրէ իբրեւ «Գրաւում մը որ սկիզբէն իսկ խոցելի էր»:

Երկու գրքերն ալ հիմնականին մէջ կը քննադատեն պատերազմի երթալու պատճառաբանութիւնը եւ արդարացումը (Rational

for going to war) եւ այն ձեւը որ այդ պատերազմը յառաջ կը տարուի: Առաջին հեղինակները կը վերլուծեն թէ այդ արժած առասպելական գումարները քանի տասնամեակներու վրայ պիտի փոխարինուին, եւ աւելի հետաքրքրականը, թէ այդ գումարները ինչ աւելի օգտակար նպատակներու կրնային ծառայել եթէ տարբեր ձեւով օգտագործուէին: Օրինակ մը տալու համար, գրքին մէջ կը նկարագրուի թէ իրաքեան պատերազմի վատնուած գումարներով կարելի էր Ամերիկայի 8.5 միլիոն բժշկական ապահովագրութենէ զրկուած մանուկներուն ապահովել շուրջ 18 տարիներ: Իրենք նաեւ կը խոստովանին որ այս գումարները «խիստ պահպանողական» թիւեր են, եւ տակաւին կրնան շատ աւելնալ եթէ պատերազմը շարունակուի այս ընթացքով: Գրքի հեղինակները կը պնդեն թէ անհրաժեշտ է անպայման «պատերազմի ընթացքի փոփոխութիւն մը» (change course) եթէ ամերիկացի ժողովուրդին պիտի խնայուի յաւելեալ ծախսեր: Ըստ այս հեղինակներուն, տակաւին նկատի չառած, երկարաշունչ (longterm) ծախսերը վերաւոր վեթերաններու, ծախսուած գումարները շատ աւելի են քան վեթերան մի 12 տարուայ ծախսերը, եւ երկու անգամ աւելի քան Գորէյի պատերազմի ծախսերը: Այս ծախսերուն պատճառաւ, ամերիկեան տնտեսութիւնը լուրջ տագնապի մէջ կը գտնուի, եւ ասոր արտայայտութիւններէն մէկն է քարուղի տակաւի Մարտ 2003ի 35 տոլարէն, այսօր հասած է 127 տոլարի:

Տակաւին գոյութիւն ունի տասնեակ հազար իրաքեան պատերազմէն վնասուածներու պարագան, որոնք մինչեւ այսօր կը տառապին անբաւարար բժշկատուողապահական խնամքէ, վեթերաններու յատկացուած հիւանդանոցներու մէջ, ինչպէս նաեւ անտարբեր «պիւրոքրասի»ի մը վեթերաններէն, շուրջ 4000,000ի հասնող «անկարողութեան» (disability) պահանջներու նկատմամբ: Այս վեթերաններէն շատեր տարիներէ ի վեր կը սպասեն: Հետաքրքրականը եւ ծիծաղելին այն է որ Պուշի իշխանութիւնը իրաքեան պատերազմի ծախսերը կ'ուզէ պակսեցնել վեթերաններու համար եղած յատկացումներէն:

Անդին տակաւին գոյութիւն ունի այս պատերազմէն շարաշահութեամբ օգտուողներու պարագան, որոնք ծանօթ եւ անծանօթ

անուններ ունին, ինչպիսիք են Հալիպըրթըն (Halliburton) կամ «Black water security» անուններ, ինչպէս նաեւ անհատ գործակատարներ որոնք միլիոններու հասնող տոլարներու ապօրէն չարաշահութեան ըրած են, թէ ամերիկեան եւ թէ իրաքեան շրջանակներէն ներս:

Հարցը միշտ կը մնայ - ինչ նպատակներով եւ ինչ ակնկալութիւններով է որ Պուշի իշխանութիւնը նախաձեռնեց իրաքեան պատերազմի: Իրաքեան տագնապը առաւել էս սրեց սիւնի-շիի-քուրդ ճակատագրութիւնները, որոնք արդէն իսկ գոյութիւն ունենին իսլամական կրօնքի ստեղծումէն ստղին: Այս մէկը պիտի շարունակուի նոյնիսկ եթէ մօտիկ կամ հեռաւոր ապագային, Ամերիկեան ներկայութիւնը տկարանայ կամ անհետանայ հրապարակէն: Ինչ կը վերաբերի Պուշի ներկայիս ջատագոված «կայուն եւ ժողովրդավարական» համակարգի մը ստեղծման Միջին Արեւելի մէջ, գէթ ներկայիս անիրականալի երազ մը կը թուի ըլլալ:

Այսքան առաջին գրքին մասին: Երկրորդ գիրքը խորագիր ունի «Պարտութիւն» բառը (Defeat) իրաքի վրայ յարձակումէն առաջ, Պուշի իշխանութիւնը այն համոզումը ունէր որ ամերիկեան բանակը պիտի նկատուէր իբրեւ «ազատարար» (liberators), առանց նկատի առնելու վերոյիշեալ դարաւոր կրօնական խնդիրները, եւ իրաքցիներու եւ արաբական աշխարհի թերահաւատ, վերապահ, նոյնիսկ ոչ-համակրական վերաբերմունքը Ամերիկայի, եւ Արեւմուտքի նկատմամբ: Սատտամի անկումէն ետք, այս վերաբերմունքը աւելի շեշտուեցաւ: Այս շրջ գրքի հեղինակը, իր իրաքցիներու հետ բազմաթիւ հանդիպումներէ ետք, այն եզրակացութեան յանգած է որ «այն օրը երբ Պուշ որոշեց իրաքի գրաւումը, այն օրն իսկ ապահովեց իր պարտութիւնը»: Ամերիկեան բանակը, փոխանակ ազատարար բանակ նկատուելու, դիմաւորուեցաւ իբրեւ թշնամի գրաւման բանակ: Ամերիկեան բանակի բազմաթիւ արարքները - քաղաքացիներու վրայ կրակ բանալ, բանտերու մէջ վայրագ վերաբերմունք, եւ նման արարքներ, իրաքի կողմէ վատ կ'ընդունուին:

Տակաւին վերջերս, իր Միջին Արեւելք այցելութեան ընթացքին,

Շարք էջ 18

authentic cuisine
full hookah bar
VIP membership
full cocktail bar
live belly dancing
live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS JELINA AND THE SAHLALAH DANCERS.

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՅՈՎՐԱՆՆԵՍ ԸԱՆՆԵՍԵԱՆԻ ԸՆԹ

Ընթացիկ ամսուայ, Մայիս 22ին, Հայց. Առաք. Եկեղեցույ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի «Գալաթեան» սրահէն ներս տեղի պիտի ունենայ Հանդիսաւոր նշումը Յովհաննէս Հաննէսեանի 80-ամեակի եւ իր հասարակական գործունէութեան 55 ամեակին: Գնահատելի է որ սոյն նախաձեռնութիւնը եւ հովանաւորութիւնը ստանձնած է Արեւմտեան Թեմի Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, գործակցութեամբ գաղութէն ներս գործող մշակութային չորս կազմակերպութեանց, Հ.Բ.Ը.Մ., Համագրգային, Թէքէսեան եւ Նոր Սերունդ:

Կ'ենթադրեմ որ սոյն երեկոյի ընթացքին, անկախ շնորհաւորանքի եւ գնահատանքի արտայայտութիւններէն, անհրաժեշտ տեղեկութիւններ կը տրուին մշակութի այս խանդավառ եւ խոնարհ ծառային, Յովհաննէս Հաննէսեանի երկար տարիներու գործունէութեան մասին, իր բազմատեսակ եւ որակաւոր բովանդակութեամբ: Արդարեւ, աւելի քան 60 տարիներու ընթացքին, Հաննէսեան երբեմն առանձին, երբեմն իր եղբօր, Կարապետի գործակցութեամբ ունեցած է այնպիսի մտաւորական եւ իմացական բեղուն գործունէութիւնը մը, որ ուղղակի մեծ հաստատութեան մը արտադրութեան տպաւորութիւնը կը թողու, եւ այս պատճառաւ ալ, կրնայ արժանանալ լաւելեալ գնահատանքի:

Սոյն հարցազրոյցի ընթերցողները վստահաբար պիտի անդրադառնան որ սովորական, ընթացիկ հարցազրոյց մը չէ այս մէկը, այլ մէկ դրսեւորումը, աւելի քան 60 տարիներու վրայ երկարող անկեղծ բարեկամութեան մը, որ յատկանշուեցաւ երկուստեք անշախախտութեամբ, յարգանքով եւ հասկացողութեամբ: Երկուքս ալ արդէն հասած ենք 80-ի շուրջ տարիքի մը, եւ սակայն, երբ յետադարձ ակնարկ մը ուզենք նետել մեր անցած ճանապարհին վրայ, անպայման պիտի անդրադառնանք որ մեզմէ իւրաքանչիւրը օժտուած էինք տարբեր խառնուածքով, տարբեր նկարագրով, նոյնիսկ տարբեր աշխարհընկալ ծով, ազգային եւ հասարակական երեւոյթներու նկատմամբ, եւ սակայն, պատանեկան տարիներէն սկսեալ, որ կը ծնէր Հաճըն թաղի մեր բնակարաններու պատկից ըլլալու հանգամանքէն, հասնելու համար մեր երիտասարդական շրջանին, եւ անկէ անդին ալ մեր հասունութեան տարիներուն: Կարելի է երեւակայել թէ ինչ ապրումներ, փորձառութիւններ, յոյսեր եւ յոյզեր կապուած են մեր կեանքերուն, նախ երկուսով, եւ ապա, մեր ընկերական եւ բարեկամական շրջանակի լայնացումով, շրջանակ որուն մաս պիտի կազմէին պէյրութահայ մեր համայնքի արժէքաւոր եւ ծանօթ անուններ, որոնցմէ ոմանք մեզի հետ չեն այլեւս, եւ ուրիշներ, որոնք տակաւին կ'ապրին եւ դարձած են, Պէյրութէն մինչեւ Գանատա եւ Ամերիկա, իրենց ազգին եւ համայնքին օգտակար հանդիսացող անձնաւորութիւններ: Այդ 7-8 անդամներէ բաղկացած խումբը, որուն վաւերական անդամներէն մէկն էր Յովհաննէսը, պարբերական հանդիպումներու ընթացքին, մտերիմ միջավայրի մը մէջ իրար հետ կը

գրուցէինք մեր կեանքերու, յատկապէս մեր ժողովուրդի ընդհանրական հարցերու մասին, մանաւանդ հասնելէք ետք որոշ հասունութեան մը, մեր անձնական եւ ընկերային կեանքերէն ներս: Քովնտի սիւնակներուն մէջ կը գտնուի Յովհաննէս Հաննէսեանի կենսագրութեան եւ գործունէութեան մէկ ամփոփ տեղեկագիրը:

Պէյրութի շրջանակի աշխարհով մէկ ցրուելէն ետք, երբ Յովհաննէս Հաննէսեան հաստատուեցաւ Քալիֆորնիոյ նախ Լոս Անձեշոս եւ ապա Կլենտէյլ քաղաքէն ներս, իր գրատունէն եւ ապա իր



տունէն ներս կրկին անգամ հաստատեց Պէյրութեան աւանդութեանց նմանող, եւ գանազան ասպարէզներու պատկանողներէն կազմուած, եւ որոշ հասունութեան հասած անձնաւորութիւններու խումբ մը, գորկոչեց «Շիրակաշէն», իր «Շիրակ», երգարաններու հետեւողութեամբ: Անձնապէս ես այդ խումբի մաս չեմ կազմած, եւ սակայն պարբերաբար մասնակցած եմ անոնց շաբաթօրեայ հանդիպումներուն, որոնք ունին որոշ կառոյց եւ բովանդակութիւն: Այս խումբը

Շար.բ էջ 19

ՅՈՎՐԱՆՆԵՍ ԸԱՆՆԵՍԵԱՆ

Ծնած է Պէյրութ՝ 1929ին: 1945ին շրջանաւարտ Սահակեան Բարձրագոյն Վարժարանէն, իսկ 1948ին՝ Համազգայինի մեմարանէն:



Ուսանողութեան յաջորդեց վեց տարուան ուսուցչութիւն: Ապա, տասը տարի «Լիբանանի Դաշնակցային Դրամատան» պաշտօնայ՝ պատասխանատու պաշտօններով:

Ուսուցչութիւնը ձգելէ անմիջապէս ետք, մաս կազմեց Սահակեան Բարձր. Վարժարանի Հոգաբարձութեան, իսկ 1969ին, եղաւ հիմնադիր անդամներէն մին՝ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (Հ.Կ.Բ.Մ.ի):

1952ին, Պէյրութի հայահոծ շրջանին մէջ, նախ պողոտայի վրայ, իր եղբօր Կարապետին հետ հիմը դրաւ «Շիրակ» հրատարակչատան-տպարանի, եւ գրատան:

Այս հրատարակչատան նախաձեռնութեամբ ու խմբագրումով լոյս տեսան այլազան բովանդակութեամբ շուրջ հարիւր գիրքեր: Այսպէս, բազմալեզու բառարաններ, համազգայութեան ընդունելութեան արժանացած «Շիրակ Երգարան»ներ, գրական-պատմական-լեզուական-մանկական հրատարակութիւններ, գրավարժութեան-գեղարվեստի տետրակներ, դասագիրքեր... որոնք գնահատուեցան ու փնտոտուեցան ընթերցողներու եւ ուսանողներու կողմէ՝ անցնող երեսունհինգ տարիներու ընթացքին:

«Շիրակ» որպէս տպարան՝ հայ հեղինակներու պատուէրներով լոյս ընծայեց բազմահարիւր հատորներ, եւ պարբերական մամուլ՝ տասնեակներով:

«Շիրակ»ի բոլոր հրատարակութեանց մէջ ներդրած է իր անձը՝ որպէս խմբագրող, վերստուգող ու սրբագրող: Ան քաջալեր հանդիսացած է շատերուն՝ մղելով զանոնք դէպի գիր ու գրականութիւն, որ դառնան հեղինակ:

Հրատարակչատան բեղուն աշխատանքներու զուգընթաց, իր գլխաւոր մտահոգութիւններէն մին եղած է նոր սերունդի հայեցի կրթութիւնը, եւ առ այդ, յարանուն կապ հաստատած է սփիւռփահայ բոլոր դպրոցներուն հետ:

1975ին, Լիբանանի քաղաքական պատերազմի հետեւանմով, տասը տարի տեղահան ապրելէ ետք, 1984ին, իր կնոջ՝ Սօսիին, եւ երկու զաւակներուն՝ Շահէին եւ Հրաչին հետ հաստատուեցաւ՝ հայ գաղթօնախմբու պատմութեան մէջ շոնդայից կերպով մուտք գործող Լոս Անձելիս քաղաք:

FRESNO -- Mazda Publishers of Costa Mesa, California announces the April 2008 publication of *Between Paris and Fresno: Armenian Studies in Honor of Dickran Kouymjian*, which pays tribute to the distinguished academic career of Dr. Dickran Kouymjian, Haig and Isabel Berberian Professor of Armenian Studies and Director of the Armenian Studies Program at Fresno State. Edited by Barlow Der Mugrdechian, a long-time colleague of Kouymjian's in the Armenian Studies Program, the articles included in the 816 page Festschrift underline the broad spectrum of Kouymjian's interests in Armenian, Islamic, Classical, and Byzantine history and art, the humanities, literature, film, genocide, and Saroyan studies.

The official languages of *Between Paris and Fresno* are English and French, with thirty-seven articles in English and nine in French. The forty-six contributors are from such diverse countries as Armenia, Austria, Belgium, Canada, Denmark, England, France, Ireland, Israel, Italy, the Netherlands, Switzerland, and the United States.

The contributors, who are among the top scholars in the world, include: Rouben Adalian, Joseph Alexanian, Sebouh Aslanian, Artsvi Bakhchinyan, Peter Balakian, George Bournoutian, Azat Bozoyan, Marco Brambilla, Helmut Buschhausen, David Calonne, Levon Chookaszian, James Clackson, Peter Cowe, Claude Cox, Yolande Crowe, Gérard Dédéyan, Barlow Der Mugrdechian, Roberta Ervine, Eric Hamp, Richard Hovannisian, Micah Jendian, Harry Keyishian, Michael Kovacs, Henning Lehmann, Christina Maranci, Marielle Martiniani-Reber, Vartan Matiossian, Barbara Merguerian, Claude Mutafian, Mikael Nchanian, Hilary Richardson, Vahram Shemmassian, Lorne Shirinian, Michael Stone, Ronald



Suny, Yves Terson, Robert Thomson, Giusto Traina, Gabriella Uluhogian, Edda Vardanyan, Bert Vaux, Aram Veaser, Christopher Walker, Jos Weitenberg, Christopher Young, and Boghos Levon Vardapet Zekian.

The idea of preparing a Festschrift was formulated in late 2003 and a first announcement and solicitation for articles began early in 2004, coinciding with several significant milestones in Dr. Kouymjian's life: his seventieth birthday (1934-2004); his forty-fifth year as a university teacher (1959-2004); and his fifteenth year as holder of the Haig and Isabel Berberian Chair of Armenian Studies (1989-2004).


In addition to serving as Coordinator-Director of the Armenian Studies Program at California State University, Fresno, for the last thirty-one years, Professor Kouymjian has, since 1989, been the holder of the Haig and Isabel Berberian Chair of Armenian Studies.

Between Paris and Fresno: Armenian Studies in Honor of Dickran Kouymjian will be a lasting tribute to Dr. Kouymjian.

My Grandmother: A Memoir By Fathiye Cetin

Growing up in the small Turkish town of Maden, Fathiye Cetin knew her grandmother as a happy and respected Muslim housewife. Only after six decades would she reveal the secret that haunted her: as a Christian-born Armenian, she was condemned to perish in the death marches of 1915. "My Grandmother, A Memoir" tells the story of a woman who found safety only at the expense of her name, her family, her religion and her nationality. Rescued from death by a Turkish Muslim gendarme, Cetin's grandmother was brought up as a Muslim and taught to conceal her past. It was only on her deathbed that she began to reveal her story. After her death, Cetin continued to connect with distant family members in America to fill in the gaps of her grandmother's incredible story. Breaking through nearly a century of silence and repression enforced by the Turkish government's persistent denial of the Armenian genocide, Cetin offers a courageous glimpse into a heritage shared by an estimated two million Turks.

Part memoir, part history, *My Grandmother* is a complex family narrative that unfolds into dramatic revelations at the heart of a family's past - and



a country's.

Fathiye Cetin is Turkish human-rights lawyer who has represented, among others, Hrant Dink, the Turkish-Armenian journalist assassinated in Istanbul in January 2007.

She is a member of the Committee to Promote Human Rights and has served as a spokesperson for the Minority Rights Working Group. Her articles have appeared in many newspapers and periodicals.

ՐԱՍԵՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՀԻՄՆԱՐԿԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԲԸ

Գործակցութեամբ կլինտէյլի Memorial Հիւանդանոցին, Հայկական Ոսկրածուծի Նուիրատուներու Հիմնարկը (ՀՈՆԱՀ) կը յայտարարէ իր երրորդ տարեկան քայլարշաւի ծրագիրը, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունիս 21-ին, Griffith Park-ին մէջ: Հասցիքը պիտի նպաստէ Հայաստանի մէջ Յողունային Բջիջներու Պատուաստումի կեդրո-

նախնի ամէն հայու, որ արեան անհշուտ մահացու հիւանդութեամբ կը տառապի, եւ կարելի ամէն միջոց ի գործ դնել՝ ոսկրածուծի համապատասխանեցումով եւ երկարաժամկէտ դարմանումով փրկելու անոր կեանքը: Դեկտեմբեր 2000-էն ասդին, համազգային ճիգերով Հիմնարկը արձանագրեց աւելի քան 14,000 նուիրատուներ, ճշգրտուեց



ՀՈՆԱՀ-ի քայլարշաւի կազմակերպիչ յանձնախումբի անդամները

նի հիմնադրման ծրագրին:

Համայնքի աւելի քան 1000 անդամներ, նուիրատուներ, հիւանդներ եւ անոնց ընտանեկան պարագաները կը սպասուի որ մասնակցին այս տարեկան հանգանակային միջոցառման, որ կը ներառէ 5 եւ 10 քիլոմետր քայլարշաւ: Աւարտին՝ տեղի պիտի ունենայ փառատոն, ուր կամուրներ եւ քայլարշաւի մասնակիցներ պիտի տօնեն իրենց յաջողութիւնը: Հաճելի միջոցառումներ, երաժշտութեան ընկերակցութեամբ՝ պիտի մատակարարուի համադամ ուտելիքներ, ինչպէս նաեւ երեխաներու համար՝ խաղեր: Քայլարշաւի մասնակիցները պիտի ստանան այդ առիթով պատրաստուած յատուկ շապիկը, ինչպէս նաեւ պայուսակ մը՝ զբաղմունքի իրերով եւ անդարար ուտելիքներով:

Անցեալի նկատառելի նուիրատուութեանց, ինչպէս նաեւ այս տարուան Ապրիլին մեծ յաջողութիւն արձանագրած թեւեթոնէն՝ Հիմնարկը արդէն իսկ գոյացուցած է \$500,000, Հայաստանի մէջ Յողունային Բջիջներու Պատուաստումի կեդրոնին ի նպաստ: Հիմնարկը կը յուսուի գոյացնել մնացեալ \$350,000-ը յառաջիկայ հինգ ամիսներու ընթացքին: Անմիջապէս որ գումարը գոյանայ, ծրագիրը գործադրութեան պիտի դրուի եւ կեդրոնը պիտի անցնի արեան քաղցկեղէ եւ արեան անհշուտ տարբեր հիւանդութիւններէ տառապող աւելի մեծ թիւով հիւանդներու կեանքը փրկելու գործընթացին՝ ցողունային բջիջներու փոխ պատուաստումի ճամբով, ինչպէս նաեւ հիմնական դեր պիտի կատարէ այլ հիւանդութեանց՝ ինչպէս օրինակ քաղցկեղի, շաքարախտի, եւ սրտի հիւանդութեանց դարմանումին մէջ:

Պատուաստումի կեդրոնը Հայաստանի մէջ առաջինն է եւ ամենէն կարեւոր միջոցներէն՝ կեանքերու փրկութեան: ՀՈՆԱՀ-ի վարչական կեդրոնը հաստատուած է Լոս Անձեւըս, ինչպէս նաեւ տարրաւարտ ունի Երեւանի մէջ, Հայաստան: ՀՈՆԱՀ-ը ոչ հաստիքաբեր հիմնարկութիւն է, որուն առաքելութիւնն է

854 հիւանդներ, գտաւ 695 համապատասխանեցումներ, եւ ամենէն կարեւորը՝ կատարեց 8 փոխ պատուաստումներ Հայաստանի, Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի մէջ:

ՀՈՆԱՀ-ի ի նպաստ դրամահաւաքի կողքին, քայլարշաւը առիթ պիտի ընծայէ բոլոր անոնց, որոնք տակաւին չեն արձանագրուած՝ որպէս ցողունային բջիջներու հաւանակալ նուիրատու: Այդ նպատակով, տեղադրուած պիտի ըլլայ յատուկ կրպակ, ուր ենթակայի լորձոնքէն օրինակ մը պիտի վերցուի, որ ետքը պիտի ուղարկուի տարրաւարտ մասնակցներու եթէ կը համապատասխանէ կարօտալի ունէ հիւանդի:

Քայլարշաւի մասնակցութեամբ հետաքրքրուողները կրնան արձանագրուիլ՝ այցելելով www.abmdr.am կայքէջը, կամ հեռաձայնելով (323) 663-3609 թիւին: Ցատուկ հնարաւորութիւն ստեղծուած է բոլոր անոնց համար, որոնք կ'ուզեն արձանագրուիլ որպէս խումբ, եւ մրցիլ այլ խումբերու հետ, ինչպէս օրինակ՝ մասնակիցներու թիւի, քայլարշաւը աւելի շուտ աւարտելու, կամ աւելի արձանագրուիլ նաեւ քայլարշաւի օրը, առաւօտեան ժամը 7:30-էն սկսեալ: Մինչեւ Յունիս 20 արձանագրութեան արժէքն է \$20.00, իսկ քայլարշաւի օրը՝ \$25.00: Քայլարշաւի օրը ընդունելի են stroller եւ wheelchair.

Քայլարշաւը պիտի սկսի առաւօտեան ժամը 8:30-ին: Մասնակիցները պէտք է հաւաքուին Griffith Park-ին մէջ, Park Rangers գրասենեակի դիմացի կողմը. հասցէ՝ 4730 Crystal Springs Drive.

Անոնք որոնք կը փափաքին յաւելեալ տեղեկութիւններ ունենալ ՀՈՆԱՀ-ի մասին, կրնան այցելել www.abmdr.am կայքէջը: ՀՈՆԱՀ-ը 501 (C)3 ոչ հաստիքաբեր կազմակերպութիւն է: Նուիրատուութիւնները տուրքէ զերծ են: Ընդունելի են բոլոր չափի նուիրատուութիւնները:

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԱՐԺԱՆԱԻՈՐ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ

Անդինէ ԲէտիՇեան-Մոնրուսեան

ճանապարհն է այս:

Կոմիտաս ըսած է. «Ամէնատաղադարը ստեղծագործողը ժողովուրդն է, գնացէ՛ք եւ սովորեցէ՛ք նրանից»:

Մարտ 30-ին Փաստինայի «Civic Center»-ի մէջ հոգեկան մեծ վայելք եղաւ թէ՛ ինծի եւ թէ՛ ամբողջ 3000 ներկայ ժողովուրդին համար, ուր առիթ ունեցանք ներկայ գտնուելու երկար սպասուած «Ժողովրդական-Աշուղական» 14 երիտասարդ, թարմ երգիչներու փառաւոր համերգին:

Ես զգացի որ հայ հոգիին թելերն էին, որ իրենց արձագանքները կ'արձակէին մեր հոգիներուն մէջ: Հիացալ այս երիտասարդներու տաղանդին եւ այդ տաղանդը հասունացած արուեստով տալու կարողութեանը: Եւ ուրախ եմ Հայաստանի մէջ տեսնելով վերադարձը մեր ակունքներու, շարունակումը եւ զարգացումը անաղարտ երգի այսպիսի բարձր որակի արուեստին, հակառակ բազմաթիւ դժուարութիւններու եւ քաղաքական անդորրութեան: Ահաւասիկ, մեր ճամբան այս է, երաժշտութեան արուեստի, մշակոյթի եւ այս բոլորի մէջէն հայութեան միութեան: Եւ ամբողջական

Ամիսներ «ARTN» հեռատեսիլի 31 կայանէն հետաքրքրութեամբ հետեւեցանք Երեւանի «Շանթ» հեռուստատեսութեան կազմակերպած «Ժողովրդական Երգ» մրցումներու ներկայացումները: Մօտ 300 երկսեռ երիտասարդներ տարբեր շրջաններէ մասնակցած են մրցումներու: Դատական կազմի արուեստագէտներ՝ Ազատ Գասպարեան, Գէորգ Տապաղեան, Արսէն Գրիգորեան եւ Լէյլա Սարիբէկեան բժախնդրորէն ունկնդրել վերջ մնացին 14 խոստմնալից երգողներ: Եւ ժողովուրդի քուէարկութեամբ նաեւ, միայն 3 համակրելի տղաք գրաւեցին առաջին դիրքերը: Նարեկ Պօղոսեան, Արմէն Դաւթեան եւ Սեւակ Ամրայեան: Արդարօրէն արժանի էին այդ պատուոյ տիրողսին. ես ալ իրենց տուած էի:

Շատ գեղեցիկ ձայներ ունէին եւ կ'երգէին ոճին հարազատ, հայկական ձայնով եւ զգացումով: Նոյն կայանէն իմացանք որ շուտով մեզի կ'այցելեն: Անհամբեր էին: Եւ եկան, ժողովրդական արուեստի սիրահարներ խուռներամ փութացին, երկու գիշերներն ալ Pasadena Civic Center

Շաբ.ք էջ 18

Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- Individual and Family Plans
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company
- Medicare Supplement Plans

Call now and let me help take the worry out of your health care!

HARUT DER-TAVITIAN
 Authorized Independent Agent
 1807 W GLENOAKS BLVD. #202
 GLENDALE, CA 91201
 (818) 502-3233
 HARUT@EXCELHYE.COM
 WWW.EXCELHYE.COM
 CA Insurance
 License #0B28270

The Power of Blue.™

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are independent licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

ՓԱՂՈՒԹՆԵՐ

ԹՈՐՈՆԹՕ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒԿԱՆ

ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

Կիրակի, 4 Մայիս 2008, երեկոցեան ժամը 7-ին, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ «Մակարոս Արթիւնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական երեկոյ, կազմակերպութեամբ Թորոնթոյի Նոր Սերունդ Մշակութային Միութեան, ուր ներկայ էին աւելի քան 150 ընտրանի մշակութասէրներ:

Օրուան հանդիսավարուհի ընկ.հի Մարիթան Տօնիկեան բարի գալտեան ջերմ խօսքերով ողջունեց ներկաները, Գանատայի քաղաքացիութեան դատաւոր Տիար Մարգիս Ասատուրեանը եւ իր տիկինը, օրուան ձեռնարկի նախագահ՝ ընկ. Ժիրայր Ականեանը, որ յատկապէս ժամանած էր Նիւ Եորքէն:

Հանդիսավարուհին հակիրճ գիծերու մէջ ներկայացուց երեկոյի գեղարուեստական բաժնին մաս կազմող երկու քոչրերը՝ երգչուհի Անահիտ Ներսիսեանը եւ կատակերգակ Վարսի Ներսիսեանը, հրաւիրուած Լուս Անճելըսէն:

Անահիտ Ներսիսեան մասնակցած է միջազգային մրցոյթներու եւ նուաճած տիտղոսներ: Մենահամերգներով հանդէս եկած է Ամերիկայի մէջ, օփերային ներկայացումներու մէջ ստանձնած է գլխաւոր դերեր: Եղած է պետական ակադեմիական քափելլայի մեներգչուհի: Սան Փեթրիսպոլի մէջ, աշխարհահռչակ երգչուհի էլլենա Օպրագցովայի հետ երգած է Վերտի «Ռեքվիեմ»-ը: Յայտագրի առաջին մասով, Անահիտ մեկնաբանեց Հ. Պէրպէրեանի, Ա. Բաբաջանեանի, Դոլուխանեանի, Կոտոցեանի, Ն. Ռուսինեանի, Այվազեանի յորինումներէն երգեր: Կատարեալ երգչուհի մը՝ հարուստ ներաշխարհով, ձայնի մաքրութեամբ, հնչերանգի լրջութեամբ եւ երաժշտական ֆրագի ամբողջական

մատուցմամբ: Ան իր բարձր արուեստով գերեց ներկաները:

Կարճ դադարէ մը ետք սկսաւ յայտագրի երկրորդ մասը:

Բնութեան օժտած սրամտութիւնն ու անկաշկանդութիւնը միշտ ուղեկցած են Վարսին: Արդէն 15 տարիէ ի վեր Լուս Անճելըսի մէջ ան իր ծիծաղաշարժ «չօ»-երով հիացուցած է հայ հանդիսատեսը: Իր կատակներուն եւ խաղերուն հեղինակն ու բեմադրիչը նոյնինքն Վարսին եւ իր քոչրը՝ Անահիտ Ներսիսեանն է:

Այդ երեկոյ Վարսին իր այնքան բնական եւ արտայայտիչ խաղարկութեամբ, մարմնի ու շարժուձեւի ճկունութեամբ հանդիսատեսին ամբողջապէս ըմբռնելու եւ ըմբռնչմանը կարելիութիւնը տուաւ իր գաւազտին անցուղարձերուն:

Բեմին վրայ ցցուն կերպով ծիծաղելի, հաճելի, դրական հիւմուրով մը ներկայացաւ Վարսին:

Հանդիսատեսները երկար ծափահարութիւններով իրենց գնահատանքը յայտնեցին արուեստագէտներուն, որոնք կրկին բեմ ելլելով գուզերով մը երգեցին:

Ձեռնարկի աւարտին ընկ.հի Տօնիկեան իր երախտագիտութիւնը յայտնեց երկու արուեստագէտներուն, որոնք ջերմացուցին Թորոնթոսայ գաղութի ազգայիններու սրտերը:

Ապա բեմ հրաւիրեց դատաւոր Տիար Մարգիս Ասատուրեանը, որ փոխանցեց իր սրտի խօսքը եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան:

Ձեռնարկը ներկաներուն դարձաւ սիրտանք. անոնք մեկնեցան գոհունակ սրտով, շնորհաւորելով թէ՛ ձեռնարկի կազմակերպիչները, եւ թէ՛ Անահիտն ու Վարսին՝ մաղթելով անոնց նորանոր ստեղծագործական յաջողութիւններ:

ՈՒԱԹԸՐԹԱՈՒՆ

«ՄԵՐ ՊԱՏԱՆԻ ԱՍՏՂԵՐ»Ը



«Մեր Պատանի Աստղեր»ը թուով 19 հոգի՝ 8-ից 15 տարեկան, Ուալթըրթաունի (Մէսէչուսէթ) եւ շրջակայքի համայնքներից, իրենց բացառիկ ելոյթով, անմոռանալի մի երեկոյ հրամցրեցին ներկաներին: Օրուայ հանդիսավարներն էին Նահանգային ներկայացուցիչ Ռէչլ Գաբրիէլեանը եւ Պոսթոնի 2007-2008 Միս-փրի-թին-ը՝ Քրիստինա Այանեան, որոնք իրենց հմուտ ու հիւրընկալ վերաբերմունքով մեծ շուք տուին երեկոյին:

Կիրակի, 2008 Ապրիլ 27-ին Ուալթըրթաունի Ֆրէսթ Փարիշ եկեղեցւում տեղի ունեցած այս համերգի հասոյթը պիտի յատկացուի Պոսթոնի Մանկական հիւանդանոցին եւ Հայաստանի որբանոցներին: «Այս ծրագիր նպատակն է քաջալերել եւ նեցուկ կանգնել շնորհալի մեր փոքրիկներուն, բեմ հանելով նրանց, ծանօթացնելով համայնքին եւ միմիանց հետ, եւ ի մի բերել նրանց կարելոր մի նպատակի շուրջ, օգնել աւելի կարիքաւոր երեխաներին» ասում է ԱՄՊրաս Արուեստի Միութեան սոյն

ծրագրի ղեկավար Լուսինէ Այանեանը:

Կատարուեցին դաշնամուրի, ջութակի եւ թաւջութակի համար գրուած եւրոպական եւ հայկական դասական ստեղծագործութիւններ: Մասնակցողներից մէկը կատարեց իր իսկ ստեղծագործութիւններից երկու գործ: Երեկոն բացառիկ էր իր տեսակի մէջ: Մենք վայելեցինք հայ եւ ոչ հայ շնորհալի փոքրիկներին մի բեմի վրայ եւ մի նպատակի համար՝ օգնել կարիքաւոր երեխաներին:

Ծրագրի վերջաւորութեան ելոյթ ունեցան Սոպրանո Նունէ Կարապետեանը Պելմոնթից եւ Սէրանէդ Լարային Անսամպլը, ղեկավարութեամբ Տիգրան եւ Նարինէ Դոլուխանեանների, արժանանալով ներկաների յտրնկայս բուռն ծափահարութեան:


Ծրագրուում է յաջորդ «Մեր Պատանի Աստղեր»ի համերգը: Հետաքրքրուող մեր փոքրիկները յաւելելով տեղեկութեան համար կարող են այցելել www.AmarasOnline.com:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

«ԿԵԱՆՔԻ ԽՃԱՆԿԱՐ»
Ռ. ԿՈՐԻՒՆ

Ն. ՏԷՐԵԱՆ

Անցնող ամիս Կլէնտէյլում լոյս տեսաւ իրանահայ երկարամեայ կրթական գործիչ, արձակագիր Ռուբէն Քէչլիշեանի (Ռ. Կորիւն) մէկ նոր աշխատութիւնը «Կեանքի Խճանկար» վերնագրով, 290 էջերից բաղկացած: Գրքի մէջ գետեղուած են հեղինակի յուշագրութիւնները, ճամբորդական նօթերը, եւ առօրեայ կեանքին կապուող իրադարձութիւններ: Հեղինակը իր այս գիրքը ձօնել է իր թանկագին ծնողներ՝ Սամսոն եւ Ուսաննա Քէչլիշեանների անմոռանալի յիշատակին: Ռուբէն Քէչլիշեանը օժտուած է բացառիկ շնորհներով: Նա կարողանում է ընթերցողին անմիջապէս գրաւել եւ նրա ուշադրութիւնը կենտրոնացնել իր ներկայացրած նիւթին, լինի դա պատմուածք թէ՛ յուշագրութիւն: Ամբողջ էջերի վրայ յատուկ շեշտաւորումով զգալի է հեղինակի անհուն սէրը իր ընտանիքի, հայրենիքի, իր գաւազներին նկատմամբ: Շնորհաւորելի է Ռուբէն Քէչլիշեանի նոր գրքի ծնունդը, որի ճաշակաւոր եւ գունագեղ շա-



















պիկը աւելի տպաւորիչ է դարձնում հեղինակի այս նոր հատորը: Գրքում ամփոփուած գրութիւնների մի մասը ցարդ տպագրուել են «Մասիս» շաբաթաթերթում: Ռ. Կորիւնը «Մասիս»ի նորամուտ աշխատակիցներից է:

Հայ Ինֆուսթեան Հունձի
Armenian Identity Harvest
Վիքթորի Հանրապարտիսին Մէջ
At Victory Park
Եկէ՛ք ու Յայտնաբերեկէ՛ք Ձեր Ինքնութիւնը
Come and Discover Your Identity!
Կիրակի, Յունիս 1, 2008
Food - մաշ
Sunday, June 1, 2008
Youth Activities - երիտասարդաց
Կէսօրէ ետք՝ ժամը 1-8
Motorsports - Մեքենական հեծանիւի ցոյց
Victory Park
Games - Իսպի
2575 Paloma St.
Arts and Crafts - Չեռային աշխատանք
Pasadena, CA 91107
Live Music - երաժշտութիւն
1 PM - 8 PM
Մուտքը Ազատ
For more information call:
626•399•1799



Mission Wine & Spirits

Pravda Vodka 750ml \$19⁹⁹ 	Hennessy VS Cognac 750ml \$20⁹⁹ 	Smirnoff Vodka 750ml \$8⁹⁹ 	
Grey Goose Vodka \$20⁹⁹ 	Cazadores Reposado Tequila \$19⁹⁹ 	Skyy Vodka \$8⁹⁹ 	Hennessy VSOP Cognac \$31⁹⁹ 
Absolut Vodka \$14⁹⁹ 	Johnnie Walker Blue Scotch Whisky \$124⁹⁹ 	Patron Silver Tequila \$33⁹⁹ 	Al Mimas Arak \$11⁹⁹ 
Hennessy XO Cognac \$99⁹⁹ 	Imperia Vodka \$17⁹⁹ 	Don Julio Blanco Tequila \$24⁹⁹ 	Jose Cuervo Especial Tequila \$10 ⁹⁹ 750ml \$20 ⁹⁹ 1.75L 
Johnnie Walker Black Scotch Whisky \$19 ⁴⁹ 750ml \$49 ⁹⁹ 1.75L 	Don Julio 1942 Tequila \$84⁹⁹ 	Cristall Vodka 1.0L \$11⁹⁹ 	Courvoisier XO Cognac \$79⁹⁹ 
1800 Reposado Tequila \$16⁹⁹ 	Belvedere Vodka \$20⁹⁹ 	Don Julio Añejo Tequila \$32⁹⁹ 	Russian Standard Vodka \$10⁹⁹ 
Johnnie Walker Green Label \$36 ⁹⁹ Gold Label \$46 ⁹⁹ 	Ketel One Vodka \$18⁴⁹ 	El Massaya Arak \$20⁹⁹ 	Courvoisier VS Cognac \$18⁹⁹ 
Gantous & Abou Raad Arak \$12⁹⁹ 	Milagro Silver Tequila \$15⁹⁹ 	Two Fingers Tequila \$8⁹⁹ 	BV Coastal All Varietals \$6⁹⁹ 

1785 E. Washington Blvd., Pasadena, CA 91104
 (626) 794-7026 • (626) 794-7368

Near the corner of Allen & Washington • Open Monday–Saturday 9 am - 8 pm
www.missionliquor.com

*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 05/31/08 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded
 • Prices subject to change without notice • No checks or credit cards
 All items are 750ml in size unless specified.

ՄԱՐԴ, ՈՐ Կ'ԱՊՐԻ ԻՐԱԿԱՆ ՅԵՔԻԱԹՆԵՐԻ ԵՒ ՅԵՔԻԱԹ-ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Շարունակուած էջ 13-էն

տը», «Պատուհանը», «Խոհանոց», «Դուռը», «Կաղամբ» բանաստեղծութիւնները գալիս են հաստատելու շրջապատող աշխարհի հանդէպ նրա ունեցած խորաթափանց ու իւրովի տեսակէտներն եւ ընկալումները: Հեղինակը շնչաւորում է դրանցից իւրաքանչիւրին, օժտում ինքնուրոյն գոյով, երեւան է բերում իրեղէն աշխարհի եւ մարդու փոխանչուած ծիրում պարփակուած հոգեմտային ու զգացական նրբին, յաճախ կեանքի առտոնին ինքնահոսում չէրեւացող շերտերը:

«Նախընտրէի կողմը, չէ աչք կենդանի ծաղկակաղամբ, որ ինծի պէս իր արմատէն խզուած, հանուած տարազիր է հողին քաղցի փայփայանքին»:

Մարդկային խոր ներքին վերապրումի (չասենք՝ ողբերգական, սակայն ողբերգաշղարշ) արեկոծումները կը բախեն ընթերցողի սիրտը Պէպօ Սիմոնեանի «Կաղանդի ապրում», «Տրոփ», «Ակնթարթը», «Սաղմոս ունայնութեան», «Խոռովք» (եւ դեռ այլ ու այլ) բանաստեղծութիւններէն ստղերով:

Դրանք, ապաւինելով խիստ ներանձնական հոգեմտային աշխարհին, այդուհանդերձ, համամարդկային հնչեղութիւն ունեն եւ դա՛ է նրանց առաւել բարձր գեղարուեստական արժէքը: Ո՞ր գրաչուն, մտածող մարդ անհատը, homo-sapiensը իր անունը չէր դնի մարդկային ունայնութեան զգացումը իր խորքին մէջ պատկերող այս տողերի տակ: «Տարածութեան գազաթնները պեղեցի, անդուդներու մթնութեան մէջ քայլեցի, դէմս ելաւ փոսն անհունին, որ անծայր կը ծաւալէր ունայնութեան տարածքին...»: Ես՝ կը դնէի: Եւ կամ ո՞վ մեզանից ի վերջոյ խոր հիասթափութիւն չէ՛ ասրել սովորաբար այդքան գուարթ եւ ճոխ կաղանդ Պապայի օրերից յետոյ: Ո՞վ չի՛ խոստովանի, որ մեր գրեթէ բոլոր յոյսերն ու բաղձանքները, մաղթանքներն ու սպասելիքները այդպէս էլ մնում են կաղանդ Պապայի պերճազարդ ու նախշակապ փակ պարկերի մէջ: «Այս կաղանդի նախօրէին դուրսի ծառերը դիտեցի, ներսի լոյսերը վառեցի, ու տանս մէջ ծառի պատրանք ստեղծեցի... Որպէսզի երբ գայ խուլ կաղանդ պապան, իր բամպակէ մօրուքովը՝ ձիւնաթոյր-արածայր պատրանքներս պատուէ, թախիծներս տարտղէ եւ հեռուի հորիզոնին երեսին շարտէ»:

Իսկ ի՞նչ ասել, «Անցումի ապրում» մտորում-բանաստեղծութեան մասին... «Կ'անցնեն օրերը ետ չդառնալու ճակատագրով... ու տարիները կը թաղուին անհող ժամանակներու անյուշ փոսին մէջ... Անյայտ են Անցեալ, Ներկայ, Ապագայ... Կ'անցնեն անշշուկ ստուերներու բոլոր ցանցերէն, ոչինչ կը մնայ անոնց մշուշէն, կ'ապրի տուայտանք գալարումներէ, ապրումն անցումի՝ միակ ահաւոր ճշմարտութիւնը երկրի-երկնքի...»:

Հաւանաբար, թէ՛ «անցումը», եւ թէ՛ «անցման» անխուսափելիութեամբ ապրած կեանքի իւրաքանչիւր օրը՝ յատուկ արիասրտութիւն են պահանջում: Ներանձնականից էլ ներանձնական զգացում եւ հարց է սա՛ որին իր կեանքի ընթացքում, ժամանակ առ ժամանակ անդրադառնում է մարդ բանականը: Այլ եւ այլ միտք-մեկնութեան ձեւ ու ոճով:

Եւ տողերիս հեղինակին յատուկ գոհացում է պատճառում այն, որ բանաստեղծն այստեղ հանդէս է գալիս իր մարդկային իմաստուն եւ հոգով գորեղ, արի կեցուածքով: Այդ է պատճառը, որ չդառնալով վրայ հասած խուճապահար արեկոծումի գոհ, դիպուկ եւ ճիշդ գտնում է բառը, միակ ճշմարիտ բառը՝ անցում, անցումի ապրում:

Ասում են (այս «թեզը» էզոթերիկ ուսմունքի հիմնասկզբից մէկն է) թէ Աստուծոն, Արարչին առաւել հաճոյ են մարդու երկու գործերը. արուեստը եւ բժշկութիւնը: Երկրորդը՝ որովհետեւ բուժում եւ Արարչի կողմից կեանք տուած մարդ արարածներին: Իսկ առաջինը՝ որովհետեւ ստեղծագործելով՝ թէկուզ մի տող, մի բառ, մի գոյն, մի հնչիւն, նմանում եւ առաւել մօտենում եւ Աստուծուն, առաւել մերձենում ես Մեծ Արարչին, քո՛ նրան նմանակող փոքր արարչագործութեամբ: Չգիտեմ, այս «թեզը» յայտնի՞ է բանաստեղծ Պէպօ Սիմոնեանին: Եթէ նոյնիսկ «արտաքուստ» յայտնի չէ, ապա միանշանակ է, որ նրա, որպէս ստեղծագործողի ենթագիտակցութեան մէջ մշտապէս արթուն է այն: Եւ դա՛ է պատճառը, որ վերոյիշեալ բանաստեղծութեան մէջ նա ընտրում-գտնում է հողեղէն կեանքի եզրագծից էլ անդին՝ Արարչի, Տիեզերքի հետ մարդ բանականի, որ նոյնինքն է՝ Պէպօ Սիմոնեանը, կապը չկորցնելու միջոցը: Չյաւերժող ճանապարհը, որն... ընդամէնը Անցում է: Եւ մտորումները այդ մասին՝ սոսկ անցումի ապրում:

Ընդհանրապէս Պէպօ Սիմոնեանը կարողանում է մարդկային ընդհանրական եւ ամենօրեայ տրաման, առանց աւելորդ զարդի կամ ծանրախօսքերի, վերամբարձ ասելիքների, պարզ ու թափանցիկօրէն մատուցել ընթերցողին: Եւ հենց այդպիսի՛ քերթուածների սեղմ կառուցուածքում ամփոփում է իր խոհափիլիսոփայական ապրումներն ու մտազննումները: Չուսպ, բծախնդրօրէն ընտրուած բառ-տողերով առաւել է խորացնում իր ասելիքի թանձր հոգեխիւթը:

Առանձնակի տեղ են գրաւում Պէպօ Սիմոնեանի ստեղծագործութեան մէջ պանդխտութեան, հայրենաբաղձութեան, հայրենիքի թեմաները: Արդէն ծանօթ էինք նրա՛ իր տեսակի մէջ բացառիկ «Հեքիաթ Հայաստանի մասին» գիրքին: Իսկ այստեղ՝ «Երկիր Նայիրի», «Գեղօն՝ հայոց յաղթանակին», «Մեռած ու յառնած խաչքարին մենախօսութիւնը», «Խորովանք Արցախի համար», «Եղեռնի խաչքար», «Արշիլ Կորքի», «Տարագիր Կիլիկիա» (եւ դեռ այլ ու այլ)՝ անեղծ հայրենակարօտ շնչով գրուած այս շարքը կարելի է բնաբանել «Ես քո մորմոքն եմ, երկիր Նայիրի» բանաստեղծութեամբ: Եւ ապա պատկերաւոր մէկ այլ տողով ամփոփել հեղինակի տուայտանք-դեզերումները Երկիր-Հայաստան-Արցախ-Հայաստան-Սփիւռք՝ հային ճակատագրօրէն վիճակուած շրջագծով. «Կռուկ երագեղն մաշած են կրունկներս»: Եւ ապա «Անտուններ» սքանչելի բանաստեղծութեամբ, որում կենդանի տրոփում է մեծն Կոմիտասի հոգին եւ ձայնը, կարելի է ընդհանրացնել տարագիր հայրենաբաղձութեան քերթուածները: Եւ ապա կարելի է բանաստեղծի այս տողերի տակ դնել մեր՝ իւրաքանչիւր հայի անունը.

ԱՆՏՈՒՆԻՆԵՐ

Կոմիտասի անտունին եմ, որ անկայուն կայքս կ'ելլեմ առանց երգի ու կարօտի երագահար...

Երագներս ջարդուփուշուր առաստաղիս ծակտիքներէն, որ կուլ կ'երթան Յորիզոնի հալածանքէն ու կապոյտին ցնորքներէն... ո՞ր կը հանգչին ցնորքներուս փաթիլները որ երերուն կ'իյնան անհող յատակներու, աւազներու...

Ուր չեն թառիր Կռունկները աւետաբեր՝ «ՍԻՐՍՆՍԱՆ ԵՒ ՓԼԱԾ ՏՆԵՐ»: Կտուրին տակ կոտորանքներ մէկտեղուեր են կազմալուծուած... կաթկթելով թախիծն իջեր, թաթխուեր է տան իրերուն որ կը հիւծին հանդարտօրէն հալունաշէն հատուածներուն... կը փղծկին բջիջները բուռն ակեր «ԿՈՏՐԵՐ ԳԵՐԱՆՆԵՐ, ԽԱՒՏԵՐ ԵՄՆԵՐ»:

Ես անտեր եմ, անտունի ծռած ճիտով թռչուններս հեռացեր են ամայութեան արիւտիքէն, հեռաստանէ այլ հեռաստան կը կծկուին ծարաւներէ, ծաղկափոթ տերեւներ՝ գոյներէ գուրկ կը դալկանան...

Բոյնէն հեռու կը դեզերիմ հառաչելով ես քուսեր՝ «ԲՈՒՆ ՊԻՏԻ ԴՆԵՆ ՄԷՋ ՎԱՅՐԻ ՅԱՄԲԵՐ»:

Երկիրդ քար կը նետեն հովին, ծովին, հովերը գիս համբոյրներով կը մոլորեն...

Կը տարտղեն կարօտներուս հիւլէները մոլեգնօրէն հովը անանց ամէն տեղ է եւ կ'աւերէ հովն անանուն մէջս ամբողջ կ'արշտկէ...: ծովամորիկէ կը պատռտիմ առագաստիս մաշած լաթերն,

որմէ կ'իյնան ծուկն-ծուկն բոկ բեկորներ՝ «ՇԼՆԻՍ ՉԿՆԵՐՈՒ ՉԱԳԵՐԱՅՆ ԿԵՐ»:

Կիցունքներս կը պղտորեն սրտիս պանդուխտ տեսիլքները որ լոյս առած հայ ծագերուն արեւածագէն տնաւերին տուն կ'որոնեն... ու կռունկին բոյն կը շինեն... որ ջիմջ սէրով մաքրագտեն ամէն բիժ, արտ էութեանս ակունքներէն որ հանգչի մէջս ծուփս օրօր գի «ԱՆՏՈՒՆԻ ՍԻՐՏՆ Ե ՊՂՏՈՐ ՈՒ ՄՈՒՐ»:

Այս Կոմիտասն անհինջ մէջս կը խռովի - Ի՞նչ կ'ընես դուն հոս դեռ որք ու անտեր՝ «ԱՂ, ՏՈ ԱՆԾ ՏՆԱԽԵՐ»:

...«Կար ու չկար՝ տղայ մը կար, որ կը վազէր հեքիաթային անտառներու արահետէն, մերթ ինքզինքը կը փնտռէր...»: Այսպէս է մտորել իր մասին Պէպօ Սիմոնեանը:

Այսօր, երբ մեր հայնացքի ներքոյ ունենք բանաստեղծ, մանկավարժ, մամուլի գործիչ Պէպօ Սիմոնեանի անցած բեղմնաւոր ուղին, երբ մեր գրագրականները հարստանում են նրա գրուած եւ տակաւին գրուող հատորներով, իրաւամբ կարող ենք վկայել եւ իր իսկ լեզուով հաւաստել. տղան, որ կար, որ կը վազէր հեքիաթային անտառներու արահետէն եւ ինքզինքը կը փնտռէր՝ գտա՛ւ իրեն: Իրեն գտաւ, չկորսուեցաւ անտառներու խոռոչներում: Եւ հեքիաթներ պեղած-գրկած մի մեծ աշխարհ, գրի՛ աշխարհ, գրի՛ առաւ, ու որպէս բանաստեղծութիւն մեզ ամենքուս ընծայուեցաւ: Տղայ մը, որ մինչեւ հիմա սիրահարուած հեքիաթներուն, ինքզինքը գտնելով կ'ապրի երագային իր աշխարհում՝ Պէպօ Սիմոնեանը:

Պէպօ Սիմոնեան բանաստեղծի անունը իր ուրոյն տեղն ունի հայ բանաստեղծութեան (արեւմտահայ եւ արեւելահայ) 60-ականների սերունդի լաւագոյն անունների բոլորում, իր ինքնատիպ ոճով մի շատ կարեւոր երանգ աւելացնելով 60-ականների ընդհանրական ասելիքի եւ յոյգերի համայնապատկերում:

Palm Springs

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ՔՆԱՅՈՂ ՅԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ մնջարան, մեծ ստաստենակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝

(818) 246-0125

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ «ԱՐԱՐԱՏ»Ի ՅԱՋՈՐԴԱԿԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ֆուտբոլի Հայաստանի առաջնություն 6-րդ տուրում առաջատարը՝ Երեւանի «Արարատ»ը հերթական յաղթանակը տարաւ՝ հիւրընկալուելով 3:2 հաշուով առաւելութեան հասնելով Կապանի «Գանձասար»ի նկատմամբ իր 6-րդ անընդմէջ յաղթանակը տօնեց եւ 18 միաւորով վատահօրէն գլխաւորում է մրցաշարային աղիւսակը:

Ախոյեան «Փիւնիկ»ը 3:0 հաշուով առաւելութեան հասաւ «Կիլիկիա»յի նկատմամբ:

«Միկա»ն 1:0 հաշուով առաւելութեամբ հասաւ «Ուլիս»ի նկատմամբ: 6-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը ունի այսպիսի տեսք.

Table with 7 columns: Team Name, W (Խաղ), D (Ցաղ.), L (Հաւ.), Pts (Պարտ. կօլ), Goals (Կէտ) and Goals Allowed (Կէտ). Rows include Ararat, Mika, Pionik, Shirak, Gandzasar, Ulsis, and Kilikia.

Ֆուտբոլի Հայաստանի Ազգային Հաւաքականը սկսում է նախապատրաստութիւնն առաջիկայ ընկերական երկու մրցախաղերին: Մայիսի 28-ին մեր ընտրանին Տիրասպոլում ուժերը կը չափի Մոլդովայի հաւաքականի հետ, իսկ Յունիսի 1-ին գերմանական Օֆենբախ քաղաքում կը մրցի Եւրոպայի ներկայիս ախոյեան յոյների հետ:

Ֆուտբոլի Հայաստանի Ազգային Հաւաքականի գլխաւոր մարզիչ Եան Պոուլսենը ուսումնամարզական հաւաքի է հրաւիրել 22 ֆուտբոլիստի, որոնցից 20-ը կը մեկնեն Մոլդովա եւ Գերմանիա՝ մասնակցելու ընկերական հանդիպումներին: Հաւաքականի կազմում գլխաւոր նորութիւնն «Արարատ»ի պրագիլացի յարձակուող Մարկոսի ներկայութիւնն է: Նա արդէն 2 տարուց աւելի բնակուում ու հանդէս է գալիս Հայաստանում եւ, ըստ գործող կարգի, արդէն իրաւունք ունի կրելու մեր հաւաքականի Հայաստանի հաւաքականում զգալիորէն կ'ուժեղացնի կազմը: Յուսանք, որ հաւաքականում էլ Մարկոսն իրեն լաւագոյն ձեւով կը դրսեւորի ու կը նպաստի մեր ընտրանու յաջող մրցելու թներին:

ԻՆՉՊԵՍ ԱՍԵՐԻԿԱՆ ՄԽՐՈՒԹՅԱԻ

Շարունակուած էջ 6-էն

Պուշ կը պնդէ «տեմոքրատի, ապահովութիւն, խաղաղութիւն» բառերու վրայ, բայց այս գրական գարգացումները օտար գէնքերու միջոցաւ չեն կրնար ստեղծուիլ: Երկար մնալով իրաքի մէջ նոյնպէս չեն կրնար պարտադրուիլ, եւ վստահա-

բար եթէ 2-3 տարի եւս մնան գորքերը, գոհերու թիւը պիտի աւելնայ առնուազն 1000ով եւ յաւելեալ նիւթական ծախսերով: Այս բոլոր նկատումներով է որ ընթացիկ նախագահական ընտրութիւնը ճակատագրական է Ամերիկայի համար: Հարցը հետեւեալն է. Ամերիկան դեռ որքա՞ն պիտի մնայ իրաքի մէջ...

ՖՈՒԹՊՈԼԻ ԵՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ

Մայիսի 22-ից 27-ը Հայաստանում տեղի կ'ունենայ ֆուտբոլի Եւրոպայի մինչեւ 19 տարեկանների առաջնությունն էլիտ-ուսուղի մրցաշարը, որտեղ Հայաստանի մրցակիցները կը լինեն Սպանիայի, Թուրքիայի ու Ուկրաինայի հաւաքականները: Հայաստանի հաւաքականի մրցակիցները արդէն Երեւանում են եւ նախապատրաստվում են Աբովեանի քաղաքային եւ Երեւանի «Միկա» մարզադաշտերում կայանալիք հանդիպումներին:



Մրցաշարի մեկնարկային հանդիպումը տեղի կ'ունենայ Մայիսի 22-ին, 14:00-ին, Աբովեանի քաղաքային մարզադաշտում, որտեղ կը հանդիպեն Հայաստանի եւ Թուրքիայի հաւաքականները: 17:00-ին, Երեւանի «Միկա» մարզադաշտում խաղադաշտ դուրս կը գան Սպանիայի եւ Թուրքիայի հաւաքականները:

Հայաստանի հաւաքականը Մայիսի 24-ին կը խաղայ Ուկրաինայի խումբի հետ, նոյն օրը Երեւանում կը մրցեն Թուրքիան եւ Սպանիան: Մրցաշարի փակման օրը՝ Հայաստանը կը հանդիպի Սպանիայի, իսկ Ուկրաինան՝ Թուրքիայի հետ, համապատասխանաբար՝ Աբովեանում եւ Երեւանում:

Եւրոպայի առաջնությունն եզրափակիչ փուլում խաղալու հնարաւորութիւն կը ստանայ միայն մրցաշարի յաղթողը: Եզրափակիչն անկացուելու է Յունիսի Չեխիայում:

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԱՐԺԱՆԱԲՈՐ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ

Շարունակուած էջ 14-էն

Մարտ 30-ին, եւ Ապրիլ 8-ին Ալեքս Թատրոն: Համերգներուն տոմսերը օրեր առաջ սպառուած էին: Պատիւ մեր համայնքին, յաջողութիւնը շքանշանով եւ փառայեղ էր:

Համերգները կազմակերպուած էին Երեւանի «Շանթ» հեռուստատեսութեան եւ 31 հեռուստակայանի սնօրէն Ռուսիայի Օլիմպիկներու կողմէ: Երգը հայ ժողովուրդի երաժշտական մշակույթի հնագոյն ճիւղն է: Ան կը փայտայէ ամենէն նախնական եւ անուս մարդուն իսկ զգացումները, մտնելով հոգիներէն ներս: Հայ ժողովրդական-աշուղական արուեստը, ինչպէս միշտ, այսօր ալ կը վայելէ ժողովուրդին սէրը:

Յիշատակելի համերգներ էին: Մեքենայական եւ տիեզերական մեր ժամանակներուն երբ կեանքի բոլոր միջոցները առարկաներու եւ երեւոյթներու առատ միօրինակութեամբ լեցուած են, իսկական ժողովրդական արուեստի հանդիպիլը ճոխացած տարագրով, թարմ ձայներով ու ճշգրիտ մեկնաբանութեամբ կը դառնայ սոն ու անսահման վայելք ու խրախուսիչ բերկրանք:

Համոյթին բարոյական դեկավար, կազմակերպիչ՝ Յակոբ Ռուբինեան մղիչ ուժն էր ամբողջ համերգին ընթացքին: Զուարթախօսութեամբ համեմուած, համոզիչ լեզուով տպաւորիչ բեմականութեամբ ճարտարօրէն ներկայացուց մասնակիցներն ու կատարուելիք երգերը: Երանի տպուած յայտագիրներ ունենայինք մեր ձեռքը, ծանօթանալու արուեստագէտներուն եւ ծրագրի բովանդակութեան: Համերգ մը հաճոյքի հետ, ըլլալու է նաեւ դաստիարակչական, ստիպուած եմ յիշողութեանս վստահիլ:

Յայտագիրը բազմաբնոյթ էր: Բացի Սպաթ-Նովայի, գուսաններ Զիւանիի, Հաւասիի, Շերամի, Շահէնի, Աշոտի «հին» բայց միշտ նոր գոհարներէն, կային նաեւ արդի աշուղներէն նմոյշներ եւ ժողովրդական երգեր: Շնորհալի երգիչները իրենց գրաւիչ ձայներով եւ երաժշտական գեղեցիկ կատարողականութեամբ, գրաւեցին հանդիսատեսին մեներգներով, զուգերգներով եւ

խմբերգներով: Ձայնին մէջն է Ազգին ոգին: Հայ ոգին հնչեց, յաւերժացաւ մեր տոհմիկ երգիչներուն ձայնին մէջ: Թ. Ալթունեանի մշակած «Հոյ իմ Նազանի Շարս» խմբերգով սկսաւ համերգը, առաջին վայրկեանէն ջերմացնելով սրահը: Ապա յաջորդաբար մեներգներ, կատակային գուգերգներ ներկայացուցին տպաւորիչ կատարումներով:

Միւրեցինք Կոմիտասի «Այ Այլուդս» գուգերգը, Հաւասիի «Եղնիկի Պէս»ը: Նարեկ Պօղոսեան՝ գրաւիչ աշուղական գորաւոր անհատականութեամբ երգիչ է, հարուստ տեմբրով եւ մեկնաբանութեամբ: Ծափեր խլեց, հոյակապ էր Սպաթ-Նովան եւ «Խանդոտ Կին» գուգերգը: Համոյթի քամանհար՝ աշուղ Միխիթարի «Մայրիկ»ը Ամրոյեան Սեւան յուզականութեամբ ջերմ զգացումով, քնքուշ ձայնով, կարծես մայրը գրկած էր, ճաշակով երգեց, նոյնքան շոյող էր «Քանքանաւոր ընկեր» երգը սրտիդ հասնող ձայն եւ մեկնաբանութիւն էր: Արմէն Դաւիթեանի ժպտուն, գուսպ առնակականութիւնը, երգի խաղիկները իմաստաւորուած արտաբերելու ունակութիւնը գովելի էր: Ազգեցիկ էր Վաչէ Յովսէփեանի «Վերադարձիր» երգը, քանոնի ընկերակցութեամբ: Վերջին երգը գերազանց հնչեց Կոմիտասի «Հոյ արա Շըր», կարծես երգհոն էր, կատարեալ երաժշտական եւ ներդաշնակ էին բոլորն ալ:

Բոլոր երգերուն կ'ընկերակցէր «Սպաթ Նովա» աշուղական երգի ժողովրդական գործիքներու համոյթը, գեղարուեստական դեկավար թովմաս Պօղոսեան, գործիքային մասի դեկավար՝ Արտեմ Խաչատուր:

Որչափ պարարտ եւ հարուստ ըլլալու է Հայաստանի հողը, արմատները ուժով պահպանուած, դիմադրելով անոր հողմերուն, մրրիկն երուն եւ վարնան ցորենի հասկերու նման նոր տաղանդներ կը ծլարձակին, հիացնելով բոլորին: Միթէ մեր գոյութիւնը, բարգաւաճումը փաստեր չեն:

Յաջողութիւն, յարատեւութիւն նորայայտ տաղանդներուն: Աշխատանքով պիտի հասնիք Շարա Տալեանին, Վաղարշակ Սահակեանին, Ռուբէն Մաթոսեանին, Օֆէլիա Համբարձումեանին:

Advertisement for MASSIS Weekly. Includes the title 'ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ', a subscription form with fields for Name, Address, City, State, Zip Code, Country, and Tel/Fax, and pricing information for USA, Canada, and Overseas.

Advertisement for 'ԳՐԱԴՈՒԱԾ ԹՈՒՎԱԿԱՆՆԵՐ' (Books for sale). Lists contact information for 'Յուրիս 14' and 'Օգոստոս 10' addresses, and lists various books for sale.

ՄՊԱՍԵԼՈՎ ՊՈՌԹԿՈՒՄԻՆ

Շարունակում է 1-ին

կամուրջները այդ կր փաստէ: Փաստ՝ որ չտեսանք Ա.1+-ի եւ «Նոյան Տապան»-ի փակումներէն ետ: Ժողովրդային այս շարժումը յուսադրիչ է: Անոնի որոնք կր փորձեն նսեմացնել եւ կամանձնադրել այս շարժումը, «յեռնական», «հակա-հոյարեանական-Սերժանական» եւ այլ պատմադրամուտքներով, կա՛մ իրականութիւնը չեն տեսներ եւ

կա՛մ ալ տեսնելով այդ մէկը, կր վախճան անոր ուժէն ու կր փորձեն պառակտել ու ձախողեցնել գայն: Հարցը անձնադրութեանց սահմանագիծէն դուրս ելած է այլեւս: Հարցը գաղափարական դարձած է: Ժողովուրդի ազատութեան եւ արժանապատուութեան հարց դարձած է: Ինչպէս եղած էր 1988-ին: Հետեւաբար, որքան շարունակուին մնշումները, այնքան ուժեղ պիտի ըլլայ գալիք պոռթկումը:

ՆՈՅՆ ԽՈՊՈՏ ԹՍԲՈՒԿԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄ

Շարունակում է 5-ին

տու թիւնը ստից»:

Ինքնին առած՝ որ քան բարձրերը սաւառնող յայտարարութիւն է ասիկա, բայց որ ժամանակ շահելու կոչուած եւ բարեմիտ ժողովուրդին մտահոգութիւնները թմբեցնելու միտող հասարակ խաղէ անդին չ'երթար: Ձեր աշխատելակերպի բնորոշ մէկ յատկանիշն ալ այս է, պարոն նախկին նախագահ: Քեզմէ հեռացուր այն խնդիրները որոնք տագնապի տարրեր կը պարունակեն՝ խոստանալով լրիւ մանրամասնել ու բացատրել ապագայի մը մէջ որ չի գար եւ գալու նպատակ ալ չունի երբէք: Ո՞վ պիտի չի շէ... ականջը խօսի Ատոլֆ Հիթլերին՝ երբ կը խօսէր մեր ցեղապանութեան մասին: Եւ լեւտոյ, ո՞ր ճշմարտութեան եւ ո՞ր սուտի մասին է խօսքը: Պարոն Քոչարեան, դուք որ մինչեւ այսօր անձնապէս կը խափանէք 27 Հոկտեմբեր 1999-ի եւ այլ բազմաթիւ քաղաքական սպանութիւններու բացատրումը, ինչպէ՞ս կրնաք ձեզ «ընտրած» ժողովուրդի աչքերուն նայիլ եւ առանց քաշուելու յայտարարել թէ ձեր հովանաւորած հետաքննութիւնը «րոպէ առ րոպէ» կը վերականգնէ Մարտի 1-ի պատկերը եւ երեւան կը հանէ ճշմարտութիւնը: Միամտութեան վերջին հանգրուանին հասած պէտք է ըլլալ՝ հաւատալու համար ձեր այս «յոյսի» անկեղծութեան:

Շարունակե՞մ, պարոն նախկին նախագահ:

Ընտրապայքարի առաջին օրէն սկսեալ, ամբողջ ժողովուրդի բոլոր հատուածներուն պատկանող պետական հօր միջոցները ի՞նչ իրաւունքով ձեր մենաշնորհ դարձուցիք եւ ընդդիմութեան թույլ չտուիք որ հաւասարէ-հաւասար օգտուի անոնցմէ եւ յաւաք տանի իր ընտրապայքարը:

Ինչո՞ւ ստիպեցիք որ պետական պաշտօնեաները ծառայեն ձեր թեկնածուին՝ անհնազանդները գործէ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՆՆԵՍԵԱՆԻ ԶԵՏ

Շարունակում է 7-ին

նոյնպէս աչքէ կ'անցնէ ազգային եւ միջազգային իրադարձութիւնները: Երբեմն ելույթները, ըստ երեւոյթին, կ'ըլլան բաւականին տաք եւ նոյնիսկ կրքոտ, սակայն կ'աւարտին ընդհանուր համերաշխութեամբ եւ ընկերական փոխադարձ յարգանքով...

Իր ուսանողութեան, ուսուցչական ասպարէզի, դրամատոնային պաշտօնէութեան, եղբոր Կարապետի հետ հիմնած «Շիրակ» հրատարակչական, տպարանային եւ գրատան աշխատանքներու, որոնք աւելի քան երեք տասնամեակ, լոյս ընծայած է հարիւրաւոր գիրքեր, եւ վերջապէս դարձած հեղինակ՝ «Գաղթը վէճը»-ով ու «Երգով» արժէքաւոր հատորի: Սոյն գրքի մասին, հրատարակուած են աւելի քան 25 գրախօսականներ, բոլորն ալ բարձր գնահատելով անոր բովանդակութիւնը, գրելու ոճը, ազգային մտահոգութիւնները, մանաւանդ հայերէն լեզուի հանդէպ իր բծախնդրութիւնը:

Ինք ոչ միայն հեղինակն է տարբեր տարբեր մարզերէ ներս հրատարակութեանց – երգարան, բառարան, մանկական նկարագրողուած գիրք, յօդուածներ, հիւմոր բովանդակող գիրք, եւ այլն, այլ պատճառ դարձած է որ իր շրջանակի տղաք, որոնցմէ ես եմ, դառնան հեղինակ, հրատարակութեան յանձ-

նելով անոնց գրքերը:

Յատկապէս կրնամ չիշել որ ինձի հետ, մեր խումբի տղոցմէ, Տօթթ. Գէորգ Քէշիշեանը, որուն հեղինակած 4-5 հատորներու հրատարակիչն էր Յովհաննէսը:

Յովհաննէս Հաննէսեան օժտուած է հանդարտ նկարագրով, եւ այդ նկարագրի ցցուն գիծերէն մէկն է սառը տրամաբանութիւնը, իր քայլերու եւ որոշումներու չափուած-ձեւուած, հաշուուած հանգամանքը, որուն իբրեւ արդիւնք, ան քիչ անգամ տեղի կու տայ սխալներու: Նոյնիսկ երբ միասին ֆուլթայով կը խաղայինք, իր խաղը կը յատկանշուէր շեշտուած իմացականութեամբ, այլ խօսքով, իր գնդակին վրայ տիրապետութիւնը յստակ էր, առանց աւելորդ շարժումներու եւ վատնուած ձիգերու: Այս պատճառաւ ալ, միշտ խնայելի կ'ըլլաինք... Նոյն հանդարտաբարոյ նկարագրի պատճառաւ ալ յատկանշուած են իր բոլոր գործերը, եւ ձեռք ձգած լուրջ յաջողութիւնները:

Իր 80-ամեակի առիթով, Յովհաննէսին եւ Սօսիին, իր տիկնոջ, կը մաղթեմ երկար եւ բեղմնաւոր տարիներ, որպէսզի երկուքով շարունակեն «տաքացնել» իրենց բարեկամներու շրջանակը, եւ իրենց պատկանած ժողովուրդին տան մշակոյթի եւ արուեստի նորանոր գործեր:

Պատիւս արժանաւորաց:

Թ. Ս.

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:00
Կլէնտոյլի 280-րդ կայանից

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՂԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ՎԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԵ, ԼԱ ԲՐԵՍԵՆԹԱ)
GLOBACAST SATELLITE
ԶԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

Հայ Թելեժամը կը վերադառնայ 18ր Ալիքի վրայ
Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը
Շաբաթը 7 օր անվճար
Հարկ չկայ բաժանորդագրուելու – 40 Յաւելեալ ալիքներ
Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել
Հայկական Թելեժամ (818) 982-2400

The Armenian Teletime Is Back On Channel 18
Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day
7 Days Per Week, Free
No Subscription Fee - Plus 40 Additional Channels
For info call The Armenian Channel (818) 982-2400



Merrill Lynch
INVESTMENT BANKING
JACK KALANJIAN
Professional Financial Advisor

Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
(626) 396-2825 Direct
(626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com

“Helping the Armenian Community Build Wealth”




AGBU



LARK MUSICAL SOCIETY

Zemiré

Չ Է Մ Ի Ր Է



A New Production by
AGBU ARDAVAZT THEATER COMPANY
AND
LARK MUSICAL SOCIETY

Dikran Tchouhadjian

ZEMIRÉ

Opera Semiseria in Four Acts

Stage Director:
KRIKOR SATAMIAN

Music Director:
VATSCHE BARSOUMIAN

A large cast of singers, actors, chorus,
orchestra and supernumeraries.

Friday
May 30, 2008, 8:00 pm
Saturday
May 31, 2008, 8:00 pm
Sunday
June 1, 2008, 3:30 pm

Pasadena Civic Auditorium
300 East Green Street
Pasadena, CA

